

Ն. ԲՈՒԽԱՐԻՆ

**Չ Ի Ն Ա Կ Ա Ն
Հ Ե Ղ Ա Փ Ո Խ Ո Ւ Թ Յ Ա Ն
Պ Ր Ո Ւ Բ Լ Ե Մ Ն Ե Ր Ը**

9(51)

բ-95

1 9 2 7

«Զ Ա Կ Կ Ն Ի Գ Ս»

5 OCT 2011

9(51)
1-85

Ա Կ Յ . , , Զ Ա Կ Կ Ն Ի Գ Ա ‘ ‘ Ը Ն Կ .

ԹԻՖԼԻՍ—ԿՈՄԻՆՏԵՐՆԻ Փ. № 5
ՅԵՐԵՎԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՅ, ԱՐՈՎՅԱՆԻ Փ. № 17

Պրոկտարները բոլոր յերկրներին միացե՛ք.

Ն. ԲՈՒԽԱՐԻՆ

ՀՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

- Армянский вопрос на Лозанской конференции . 50 к.
- Գ. ՂԱՐԱԶՅԱՆ (Արկումեդ). — Հայ հեղափոխական առաջին խմբակը Անդրկովկասում . . 60 կ.
- Ա.Բ. ՅԵՐԶՆԿՅԱՆ. — Աշխատավորության դատարանին 65 կ.
- О. КАЧАЗНУНИ.—Дашнакцүтюн больше нечего делать 65 к.
- А. МЯСНИКЯН.—Армянские политические партии за рубежом 50 к.
- Ա. ԿԱՐԻՆՅԱՆ. — Դաշնակցականների մասին . 60 կ.
- Ի. Վ. ՍՏԱԼԻՆ. — (Համառոտ կենսագրություն՝ լուսանկարով) 12 կ.
- Ս. ԽԱՆՈՅԱՆ. — Բողոքան կնունյան 45 կ.


Զ Ի Ն Ա Կ Ա Ն
Հ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ո Ւ Թ Յ Ա Ն
Պ Ր Ո Ւ Լ Ե Մ Ն Ե Ր Ը
(Խ Ն Դ Ի Ր Ն Ե Ր Ը)

1927

~~13566~~

«Զ Ա Կ Կ Ն Ի Գ Ա.»
ԹԻՖԼԻՍ—1927

Н. Бухарин
 Проблемы
 Китайской революции
 „ЗАККНИГА“



1. ՉԻՆԱԿԱՆ ԱՆՅՖԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Միանգամայն անկարելի չե հավակնել մի գեղույցի մեջ դնելու և վճռելու այն բազմաթիվ, ծայր աստիճան բարդ խնդիրները, վորոնք ծագում են չինական մեծ հեղափոխության հետ: Ստիպված պետք է լուսաբանել լոկ մի քանի հիմնական խնդիրներ, որոնք եական են չինական հեղափոխության զնահատություն և ուղիղ լուծման համար այն տաքտիկական խնդիրները, վորոնք հանդես են գալիս չին կոմմունիստական կուսակցության և կոմմունիստական Միջազգայնականի առջև:

Սակայն անհրաժեշտ է նախապես ասել մի քանի խոսք այդ խոշոր պատմական անցքի նշանակության մասին:

Բովանդակ աշխարհը թևակոխում է հիմա գարգացման նոր փուլի մեջ՝ մեր ժամանակաշրջանի հիմնական պատմական ուլժերի պայքարի նոր փուլի մեջ: Իմպերիալիստական աշխարհը կանգնած է շուկաների չափազանց սուր խնդրի առջև: Իմպերիալիզմը համաշխարհային հիմնական ուժերը՝ վորոշ գաղարի շրջանից հետո՝ վերստին ցուցա-

գրում են ծայր աստիճան ինտենսիվ առաջախազաց գործունեություն այդ ուղղությունը: Մասնավորապես առաջնակարգ գործության իմպերիալիստական պետություն՝ Միացյալ Նահանգները — այժմ վարում են աննախընթացորեն ակտիվ իմպերիալիստական քաղաքականություն, նրա դեմ ծառանում է բովանդակ Լաթինական Ամերիկան: Նրանք զավթում են Նիկարագուան, սպառամբություն են սարքում Մեքսիկայում, ամենաակտիվ կերպով մասնակցում են ռազմական գործողություններին՝ ուղղված չին ժողովրդի դեմ:

Նույն չափով սուր է իմպերիալիստների համար հեղափոխական տենդենցները դեմ պայքարի խնդիրը: Այժմ կարելի չէ ասել, վոր միջազգային կապիտալը վերըստին գոում է անմիջական համաշխարհային սպառնալիք հեղափոխական շարժման կողմից:

1917—1921 թ. թ. շրջանում հեղափոխական հորձանքը, վոր անցնում էր Յեվրոպայի վրայով, մտցրեց յերկյուղ մեծ իմպերիալիստները գլուխների մեջ, և բոլշևիզմի սպառնացող վտանգը կանգնում էր բուրժուազիայի առջև, վորպես բոլշևիզմի համաշխարհային և անմիջական սպառնացող վտանգ: Դա մինչ այն աստիճան ինքնըստենքյան հասկանալի մի ճշմարտություն էր, վոր Մարտովր մի ամբողջ գիրք է գրել «Համաշխարհային բոլշևիզմի» մասին: Պահ մի անց, չին հեղափոխություն առա-

ջընթացյություն հետ միասին, բուրժուազիան հիմա վերստին անմիջական հեղափոխական սպառնալիքի ներքո չէ և համաշխարհային մաշտաբով, վորովհետև չինական հեղափոխությունն այնպիսի ահագին ռազմադաշտ է և հասարակական-դասակարգային պայքարի շրայտույտի մեջ մարդկանց այնքան ահագին քանակություն է նետում, վոր այդ անցքի հետևանքներն իրավ վոր անասելի մեծ են: Այստեղից միանգամայն հասկանալի չէ, թե ինչու հիմա առանձնապես սուր կերպով միջազգային բուրժուազիայի առջև ցցվել է նայել մեր խորհրդային Միության խնդիրը:

Յերբեմն Մարքսն ասել է՝ «Հեղափոխություն կուսակցությունը միաբանում է հակահեղափոխության կուսակցությունը»: Միջազգային ծավալվող հեղափոխական շարժումը, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունց ամրացող Միությունը և չինական հեղափոխության անորինակ լայն թափը, միաբանում են հակահեղափոխության ուժերը, և այդ տենդենցը գտնում է իր արտահայտությունը մեր Միության և չինական հեղափոխություն դեմ միասնական բլուկ կազմելու պարզապես դրսևորված ձգտումի մեջ:

Հասկանալի բան է, վոր այդ անլուր պայքարը բարդանում է այլևայլ հակամարտություններով, վորոնք գոյություն ունեն կապիտալիստական տերությունց միջև: Իմպերիալիստական տերությունց Չինաստան ուղարկած եքսպեդի-

ցիայի մեջ իսկ մենք արդեն տեսնում ենք դանազան շփումներ, կարծիքների զանազան տարբերություններ. մի բան, վոր իմպերիալիստական հնարավոր խոշոր բաղխումների սաղմն է: Այդ կոնֆլիկտները հետագայում կարող են ուժգին թափով ծավալ առնել և իմպերիալիստական հսկաների միջև հսկայական բաղխումներ առաջ բերել: Մակայն ներկայումս իմպերիալիստական պետությունները միահամուռ կերպով են գործում ընդդեմ հեղափոխության շարժման ոջախների: Իմպերիալիստական ճակատը վերստին քակված է բովանդակ արևելյան ռազմամասում, և պետք է դնահատել վողջ ահագին նշանակությունը այն փաստի, վոր այս տարվա ընթացքում, ըստ եյուլթյան, առաջին անգամն է, վոր մենք պրոլետարական դիկտատուրայի յերկրի կողքին ունենք հեղափոխական հակաիմպերիալիստական պետություն, վոր գրավել է Չինաստանի կեսը: Մենք ունենք պետականորեն կազմակերպված չինական հեղափոխությունը՝ իր բանակով, վոր որչեկտիվորեն խոշոր հեղափոխական դեր է կատարում: Պրոլետարիատի դիկտատուրայի պետության կողքին գոյություն ունի հակաիմպերիալիստական պետություն Հեռավոր Արևելքում, վոր հենվում է հզորագույն և հարածուն հեղափոխական ուժերի վրա:

Հեղափոխության ուժերի այդ միաբանությունը միաբանում է հակահեղափոխության ուժերը: Իրա հետևանքով մենք անաղմուկ կամ նվազ աղմուկով, քան կարելի յեր սպասել, ըստ

եյուլթյան ներս ենք սողացել նոր պատերազմի մեջ, վորովհետև, ներկայումս փաստորեն տեղի ունի պատերազմ հեղափոխական Չինաստանի և իմպերիալիստական պետությունաց ու չինական ռեակցիայի բլոկի միջև: Մենք չպիտի ծածկենք այն փաստը, վոր Հնայած պատերազմի սկզբում տեղի ունեցող սովորական այլևայլ ձևականությունաց բացակայություն՝ մենք այնուհանդերձ ըստ եյուլթյան ունենք պատերազմ: Յեվ առհասարակ բացարձակապես վոչ վոք չի սպացուցել, թե գալիք պատերազմների ձևական սկզբստուարները պիտի լինեն 1914 թվականի պարզ կրկնողությունը...

Մարքսիստական նախատեսության ույժը դարձյալ և կրկին սպացուցված է չինական հեղափոխության անցուդարձերով: Անցած դարի կեսերին Մարքսը գրել է.

«Յերբ վոր մեր յեվրոպական ռեակցիոներները, վերջապես, իրենց գալիք փախուստի պահին, Ասիայի միջով կհասնեն չինական պարբային, դարբասին, վոր տանում է դեպի հնադարյան ռեակցիայի (Urreaktion) և խորարմատ պահպանողականության ոջախը, ով գիտե, թերևս նրանք դարբասի վրա տեսնեն գրված République Chinoise, Liberté, Egalité, Fraternité (Չինական Հանրապետություն: Ազատություն: Հավասարություն: Յեղբայրություն*:

Ճիշտ է, այդ նախագուշակությունն արդարացավ լոկ կիսով չափ, քանի վոր Արևմուտքում

* Marx—Nachlass, 3, S 444—415:

բուրժուազիան տակավին տապալված չէ, բայց մյուս կողմից, անկասկած, «յեվրոպական ուսուցիչները» համանշտով չինական պարսպին, կարող են տեսնել հրա վրա գրած՝ «Չինական հանրապետություն», իսկ Ֆրանսական հեղափոխության յերեք լողունները փոխարեն կարող են տեսնել Սուն-Յատ-Սենի յերեք սկզբունքները՝ դեմոկրատիա, նացիոնալիզմ, սոցիալիզմ:

Հետքերական է մի ուրիշ դիտողություն ևս, վոր Մարքսն արել է 1853 թ. իր հոդվածներին մեկում «Նյու-Յորք Դեյլի Տրիբուն» թերթի մեջ: Վերլուծելով անգլիական կապիտալիզմի ներթափանցումը Չինաստան, Մարքսը գրել է.

«Նման պարագաներում... Կարելի չէ հաստատապես գուշակել, վոր չինական հեղափոխությունը արդի արդյունագործական սիստեմի վառողի պահեստի մեջ կայծ ենետելու և առաջացնելու յե պայթում վաղուց հետե պատրաստվող ընդհանուր ճգնաժամի, վոր կանցնի արտասահման և մոտիկ ապագայում առաջ կբերի ցամաքի վրա քաղաքական հեղափոխություններ: Որիպի նալ տեսարան. այն պահին, յերբ Չինաստանը արևմտյան աշխարհին ըմբոստացում է բերում, արևմտյան տերությունները «կարգ» են ստեղծում Շանհայում, Նանկինում և Մեծ Կանալի յերբի վրա՝ անգլիական, Ֆրանսական և ամերիկյան ռազմանավերով»:

*) „Unser dem Bannern des Marxismus“ B II S 383.

Մարքսի այս նկարագրությունը, ինչպես մենք տեսնում ենք, գրեթե լիովին իրականացել է. անգլիական և ամերիկյան ռազմանավերը իրոք վոր ճնշում են չինական հեղափոխությունը, վոր կայծ է նետում «արդի արդյունագործական սիստեմի վառողի պահեստի մեջ»:

Հայտնի է, թե ինչ նշանակություն էր տալիս Լենինը գաղութային և կիսագաղութային յերկիրներին հեղափոխություններին: Լիովին համապատասխան Լենինի պրոգնոզին, վոր ամբողջովին արդարացավ, մենք պնդում ենք՝ մեր դարաշրջանի հիմնական պատմական ուժերի պայքարը ներկայումս թևակոխել է նոր, մինչև որս իր չափերով շտեմնված ռազմադաշտի նոր փուլի մեջ: Նորերս յեվրոպական բուրժուական թերթերինց մեկում գրված էր, թե հիմա ստեղծվում է մի հսկայական հեղափոխական ճակատ Արխանգելսկից մինչև Շանհայ, վորի շարքերում 800 միլիոն ազգաբնակիչություն կա: Յեվ դա բոլորովին ճիշտ է: Պայքարը նոր փուլի մեջ է մտել: Մարդկային մասսայի հսկայական շերտեր հիմա պայքար են մտնում, իսկ դա կնշանակի, թե հետագայում ավելի ևս կսրվի մեծ պայքարը, վորի մեջ մտել է մարդկությունը իմպերիալիստական ժամանակաշրջանում, վոր ի յե ռազմական կոնֆլիկտներով, ավերիչ պատերազմներով, հասարակական - դասակարգային հսկայական ցնցումներով, մեծ հեղափոխություններով:

2. ՉԻՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Այս նախաբանից հետո, անցնենք չին հեղափոխության կոնկրետ խնդիրներին: Անհրաժեշտ է նախ և առաջ շեշտել չին հեղափոխության առանձնահատուկ գծերը, վորովհետև առանձնապես անհրաժեշտ է և կարևոր յուրաքանչյուր նոր պատմական անցքի մերձենալու պահին խուսափել սքեմատիզմից, շաբլոնից, այն բանի պարզ կրկնությունից, վոր արդեն տեղի յե ունեցել նախապես կամ, ընդհակառակը, կարևոր է գտնել, ընդգծել, վերլուծել, տեսաբանորեն ըմբռնել ուրույն, առանձնահատուկ, սպեցիֆիկ գծերը, վոր ունի տվյալ պատմական դեպքը:

Չին հեղափոխության առանձնահատուկությունը նախ և առաջ պայմանավորվում է նրանով, վոր դա ազգային - ազատագրական հեղափոխություն է: Նա պիտի լուծի Չինաստանի հավաքման խնդիրը, նա պիտի Չինաստանը վերածի կենտրոնացած պետության: Նա պիտի Չինաստանը հանի կիսավատական բաժան-բաժան կացությունից և դուրս բերի նրան հավասարազոր, ոտար իմպերիալիզմի շահատա-

կությունից անկախ, պատմական զարգացման լայն ուղին:

Որչեկտիվ պատմություն ընթացքի դրած այս խնդիրները պայմանավորում են այն, վոր չին հեղափոխությունը իրավամբ կոչվի ազգային-ազատագրական հեղափոխություն:

Չին հեղափոխության յերկրորդ գիծն այն հանգամանքն է, վոր դա վոչ թե հասարակ ազգային-ազատագրական հեղափոխություն է, այլ մի ազգային-ազատագրական հեղափոխություն, վոր տեղի ունի կիսազաղութային մի յերկրում: Այդ հանգամանքը, ինչպես մենք կտեսնենք հետագայում, շատ խոշոր նշանակություն ունի: Ազգային ազատագրական հեղափոխությունը Չինաստանում խորապես տարբերվում է ազգային-ազատագրական հեղափոխությունների այն շարքից, վոր, ասենք, Յեվրոպայում լցնում է XIX-րդ դարի կեսերը: Յեվրոպական մի շարք յերկրներում այն պահին նմանապես ծառայած էր հավաքման խնդիրը, ավատական բաժան-բաժանվածության հաղթահարումը, անկախ ազգային-պետական գոյություն իրականացումը: Մի շարք բուրժուական հեղափոխություններ, վորոնց մասին է մեր խոսքը, լուծել են հենց այդ խնդիրները: Սակայն չին հեղափոխության խորունկ տարբերությունը այդ ազգային-բուրժուական հեղափոխություններից այն է, վոր չին հեղափոխությունը կատարվում է կիսազաղութային մի յերկրում, վոր չին հեղափոխությունը հանում է Չինաստանն ու չինացիներին

գաղութային բնույթ կրող կիսաստրկական հպատակությունից:

Որովհետև գաղութային շահագործումը իր ուրույն գծերն ունի և՛ տնտեսության բնագավառում, և՛ քաղաքական-իրավական ու պետական հարստահարության բնագավառում: Հոչակավոր մակադրությունը, վոր ցուցադրում է իմպերիալիստների վերաբերմունքը դեպի չինացիները, ցուցադրում է իրեն իսկ Չինաստանի վիճակը, այն է՝ «չինացիներին և շներին մուտքը արգելված է» — գեղեցիկ իլլյուստրացիա յե Չինաստանի կիսագաղութային վիճակի: Այդ վիճակին համապատասխան հեղափոխական պայքարի խնդիրը Չինաստանում կազմում է հեղափոխության յերկրորդ ուրույն գիծը՝ համեմատած անցած դարի ազգային-ազատագրական պայքարի հետ յեվրոպական պետությունների մեջ. մի պայքարի, վորի հետևանքով տեղի ունեցան մի շարք ազգային-ազատագրական պատերազմներ:

Չին հեղափոխության յ երրորդ գիծն այն հանգամանքն է, վոր դա հակա իմպերիալիստական հեղափոխություն է: Նա ուղղված է ստար կապիտալիզմի, իր հասուկ պատմական ձևի կապիտալիզմի տիրապետության դեմ: Նա իր սուր ծայրով ուղղված է իմպերիալիզմի դեմ: Չին հեղափոխության զարգացումը ջլատում է նրա գորությունը:

Չորրորդ գիծը, որ վերաբերում է չին հեղափոխության տակավին հիմնիվա չավարտված փուլին, այն է, որ նա առայժմ, իր զարգաց-

ման ներկա փուլի մեջ, բուրժուական հեղափոխություն է. մի բան, վոր, իհարկե, բնավ չի նշանակում, թե նրա հիմնական առաջմղիչ ույժը բուրժուազիան է: Չինական հեղափոխությունն իր զարգացման այժման փուլի մեջ բուրժուական-դեմոկրատական հեղափոխություն է այն չափով, ինչ չափով յերկրի ներսում նա դեմ է ավատական մնացորդներին, միջնադարյան կապանքներին, վորոնք խանգարել և խանգարում են Չինաստանի հետագա տնտեսական զարգացումը: Նա ուղղված է ավատական մնացորդների դեմ, այդ ավատականությունը կրող հասարակական դասակարգերի՝ «իմպերիալիստների» դեմ, վորոնք բլոկի մեջ են կապիտալիզմի գերազույն և միաժամանակ փթել սկսող ձևի՝ իմպերիալիզմի հետ:

Իս չին հեղափոխության չորրորդ գիծն է:

Վերջապես պետք է շեշտել չինական հեղափոխության նաև հինգերորդ առանձնահատկությունը: Մենք ի նկատի ունենք այն, վոր ազգային-ազատագրական հակաիմպերիալիստական, առայժմ բուրժուական հեղափոխությունը, վոր կատարվում է կիսագաղութային մի յերկրում, ունի տեղեկեց գերաճելու, դանազան ետապներով և զանազան փուլերից անցնելով՝ սոցիալիստական հեղափոխություն դառնալու: Վերջին հաշվով նա ունի տեղեկեց Չինաստանի զարգացումը սոցիալիստական ուելսերի վրա գցելու: Դրանից բնավ չի կարելի հետևյալ, բնականա-

բար, թե նա այդորինակ գերաճման հեղափոխու-
թյան «դասական» նմուշ է:

Զինական հեղափոխության այդ առանձնա-
հատկությունը պետք է ամեն կերպ շեշտել:
Ավելի մանրամասն մենք կանգ կառնենք այդ
ստիժով հետազայում: Իսկ այստեղ նպատակա-
հարմար կլինի ասել մի քանի խոսք այն մասին, թե
ինչով է պայմանավորված այդորինակ գերաճման
հնարավորությունը: Նախ և առաջ պայմանավոր-
ված է չին բուրժուազիայի հարաբե-
րական թուլությամբ՝ համեմատած
չին բանվոր դասակարգի ուժի հետ:
Այդ չի նշանակում, թե բանվոր դասակարգն այն-
տեղ մի վոչ հարաբերական-խոշոր ուժ է: Այստեղ
մենք կամենում ենք ընդգծել չին հասարա-
կության դասակարգային փոխհարաբերության
առանձնահատկության փաստը, վոր բղխում
է չին տնտեսության առանձնահատկությունից:
Զինաստանի արդյունագործության և յերկաթու-
ղինների մեջ դրած կապիտալների ընդհանուր քա-
նակից ահագին տոկոսը ոտար կապիտալին է
պատկանում: Մինչդեռ բանվոր դասակարգն
աճում է վոչ թե տեղական կապիտալի, այլ առ-
հասարակ կապիտալի աճման հետևանքով, գոր-
ծարանների քանակի և չափերի համեմատու-
թյամբ, առանց ազգային խտրության: Մասնա-
վորապես այդ միտքն ենք մենք ձևակերպում՝
հիշելով չին բուրժուազիայի համեմատական թու-
լությունը:

Այնուհետև ահագին նշանակություն ունի
այն պարագան, վոր Զինաստանի շրջապատը
վոչ միայն կապիտալիստական է,
այլև սոցիալիստական: Մյուս կողմից
Զինաստանի շրջապատում կան և գաղութներ:
Թեև վերջինս հանդիսանում է կապիտալիստա-
կան աշխարհի մասնիկը, այնուամենայնիվ պարզ
է, վոր չի կարելի նրան յապոնական, ամերի-
կյան կամ յեվրոպական կապիտալիզմի շարքը դա-
սել: Այդ ամենը առաջնակարգ նշանակություն
ունի՝ չինական հեղափոխության ընթացքն ու
բախտն ըմբռնելու համար:

Ահա այն հիմնական գծերը, վորոնք միասին
առած դարձնում են չին հեղափոխությունը
իրորինակ: Զին հեղափոխության այդ չափազանց
բարդ բնույթագծումից անխուսափելիորեն բղխում
են բարդությունն ու իրորինակու-
թյունը տաքտիկական խնդիրների,
վորոնք կանգնած են չինական կոմունիստական
կուսակցության և կոմունիստական Իստերնա-
ցիոնալի առջև:

3. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄ, ԱՎԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԶԻՆԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Չին հեղափոխութեան առանձնահատուկ դեմքը կազմող զանազան գծերի միջից պետք է ավելի մանրամասն կանգ առնել ի մ պ ե ռ ի ա լ ի դ մ ի, ա վ ա տ ա կ ա ն ու թ յ ա ն և չ ի ն ա կ ա ն հ ե ղ ա փ ո խ ու թ յ ա ն բ ն ու յ թ ի փ ո խ - հ ա ռ ա բ ե ռ ու թ յ ա ն ց վ ը ա: Այդ խնդիրը բարձրացավ այն վիճաբանութեանց միջոցին, վոր տեղի ունեցան կոմմունիստական ձեմարանի մեջ ընկ. Ռազեկի զեկույցի առիթով: Ընկ. Ռազեկն այնտեղ հանդես բերեց իր ուրույն տեսակետը Չինաստանի հարաբերութեանց առթիվ. մի բան, վոր կանխորոշել էր վորոշ չափով նրա տաքտիկական յեզրակացութեանները: Խնդիրը նախ և առաջ վերաբերում է չին հեղափոխութեան ընթացիկ շրջանին և նրան, թե ինչ է չինական հեղափոխութեան ըստ իր դասակարգային եյութեան՝ ժամանակի հիմիկ վա կտորի վրա:

Ընկ. Ռազեկը յերկու գրութեան է առաջ մղում: Առ ա ջ ի ն գրութեանը՝ չին հեղափոխութեանը բուրժուական հեղափոխութեան է: Ահա ընկ. Ռազեկի ձառից համապատասխան կտորն ըստ սղազրութեան՝

48-66-74

«Մենք շարունակ բնորոշել ենք չին հեղափոխութեանը, վորպես ազգային-հեղափոխական ազատագրական շարժում: Ա գ գ ա յ ի ն - հ ե ղ ա փ ո խ ա կ ա ն ազատագրական շարժումը բուրժուական հեղափոխութեանց մի տեսակն է. դա բուրժուական հեղափոխութեան է այն յերկրներում, վորտեղ շահագործումի ճնշումը տիրող դասակարգերի կողմից կապված է ուղղակի թեանուզակի կերպով իմպերիալիստական տիրող դասակարգերի տիրապետութեան հետ, ասենք, արդյունագործական կապիտալիզմի շրջանում՝ արդյունագործական բուրժուակալից, իմպերիալիստական շրջանում՝ Ֆինանսական բուրժուակալից» (ընկ. Ռազեկի կոմմունիստական ձեմարանում արած զեկույցի սղազրութեանը: Ընդգծումը մերն է):

Արդ, ընկեր Ռազեկը այն գրութեանն է առաջ բերում, թե չին հեղափոխութեան զարգացման սվյալ շրջանում, այդ հեղափոխութեանն՝ ըստ իր հասարակական-դասակարգային եյութեան՝ կարելի չէ բնորոշել, վորպես բուրժուական հեղափոխութեան:

Այս գրութեան հետ, ընդհանրապես, կարելի չէ համաձայնել*: Սակայն նույն զեկույցի մեջ ընկ. Ռազեկը հանդես է բերել մի ուրիշ գրութեան, վոր վերաբերում է չին հասարակութեան հիմնական դասակարգերի հարաբերութեանը:

* Մենք բնորոշել ենք այնտեղ մի շարք անճշդ զրիտ կամ սխալ ձևակերպութեան, որոնք կառավարվում են ըստ չինական կոմպարտիստական կուլտուրայի:



Այդ դրութիւնը հետեւյալն է՝ հիմա մենք տեսնում ենք առաջինը՝ չին հեղափոխութեան ակունքների բովանդակ խորութիւնը: Զին հեղափոխութեան ակունքները պակաս խոր չեն, քան 1905 թ. մեր հեղափոխութեան ակունքները: Կարելի չէ հաստատապէս ասել, վոր բանվոր դասակարգի և գյուղացիութեան միջև այնտեղ ավելի զորեղ դաշնակցութիւն կլինի, քան մեզանում 1905 թ. այն պարզ պատճառով, վոր նրանք վոչ թե յերկու դասակարգ են հարվածելու, այլ մի հատիկ դասակարգ՝ բուրժուազիային»:

Այսպիսով ընկ. Ռազեկը մատնացույց է անում, թե Ռուսաստանի բանվոր դասակարգն ու գյուղացիները հարկադրված են յեղել դուրս դալ ընդդեմ կալվածատերերի և բուրժուազիայի. մինչդեռ Զինաստանում ավատատեր ասածդ առհասարակ գոյութիւն չունի, և բանվոր դասակարգը գյուղացիութեան հետ միասին հարվածում է միայն մի դասակարգ՝ բուրժուազիային. մի բան, վոր առավելագույն հնարավորութիւն է հանդիսանում բանվոր դասակարգի և գյուղացիութեան միաձուլմանը ավելի, քան մեզանում 1905 թ.:

Այս բնութագրին վոչ մի կերպ չի կարելի համաձայնել: Այստեղ ընկ. Ռազեկը մոլորվել է և կովում է ինքն իր դեմ: Ճիշտ է, վոր բուրժուական հեղափոխութիւնը կարող է ծավալվել վոչ միայն առանց բուրժուազիայի մասնակցութեան, այլև ընդդէմ բուրժուազիայի:

Այնուամենայնիւ, յուրաքանչյուր բուրժուական հեղափոխութեան իմաստը, -- դեկավարված լինի դա բանվոր դասակարգի գերիշխանութեամբ թե գերիշխանութեամբ հեղափոխական մանր բուրժուազիայի (ինչպես, որինակ, Ֆրանսական Մեծ Հեղափոխութեան ժամանակ, յակոբինյանների դեկավարութեամբ), -- հանդիսանում է ավատականութեան այս կամ այն մնացորդների վոչնչացումը: Ըստ ընկ. Ռազեկի՝ Զինաստանում ավատականութիւն չկա: Ապա ուրմն ինչպէս կարող է բուրժուական հեղափոխութիւն տեղի ունենալ: Յերկրի ներսում ո՞ւմ դեմ է նա ուղղված: Այդ խնդիրն անհնար կլինի լուծել, յեթե միաժամանակ պնդելու լինենք, թե ավատականութիւն չկա, թե բանվորն ու գյուղացին մաքառում են լոկ բուրժուազիայի դեմ: Յեթե ավատականութեան վերացման խնդիրը լուծված է, ապա ուրեմն վորտեղից է ծագում բուրժուական հեղափոխութեան պրոբլեմը:

Վերհիշենք, թե ինչպես ենք մենք՝ բոլշեվիկներս զնելիս յեղել բուրժուական հեղափոխութեան խնդիրը մեզանում՝ 1905 թվականի հեղափոխութիւնից հետո: Մենչեխիկներն ասում էյին, թե 1905 թ. հեղափոխութիւնը ավատական-ճորտատիրական կարգերի հիմնական խընդիրները լուծել է, ուստի բուրժուական հեղափոխութիւնը որչեկտիվորեն ավելորդ է դարձել, այդ պատճառով նոր հեղափոխութեան յենթադրութիւնից յեխելը անհնարին է: Ինչպէս եր դնում խնդիրն ընկ. Լենինը: Լենինն ընդունում

եր, վոր յեթե իրոք այդ խնդիրը լուծված լիներ 1905 թ. հեղափոխություն միջոցով, այլևս բուրժուական հեղափոխությունը պատմականորեն «ավելորդ» կլիներ: Բայց նա տակավի չէր լուծված: Բուրժուական հեղափոխությունը՝ դասակարգային պայքարով յերկրի ներսում՝ անխուսափելի յե այն չափով, վոր չափով յերկրի զարգացման համար անհրաժեշտ որջեկտիվ խնդիրը չի լուծված. խնդիր, վոր ավատական հարաբերութեանց մնացորդներ լի վերացման գծով ե ընթանում: Միմիայն այս վերջինների առձեռն լինելով ե յերկրի ներսում բուրժուական հեղափոխութեան խնդիր ծագում, ինչ դասակարգ ել այդ հեղափոխությունը վարելու լինի, ուժերի ինչ փոխ-հարաբերություն ել այդ յերկրում լինի:

Ընկ. Ռադեկը խոսել ե նմանապես «հողային հարցի անլուր սրութեան» մասին: Սակայն ինչպես կարելի յե խոսել հողային խնդրի անլուր սրութեան մասին, յեթե բուրժուական հեղափոխութեան խնդիրը լուծված ե: «Հողային խնդրի անլուր սրությունը», յեթե տեսաբանորեն մոտենալու լինենք այդ խնդրին, բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեան բովանդակ շարժման առանցքն ե հենց այն պատճառով, վոր ճորտատիրական հարաբերութեանց մնացորդները տնտեսական զարգացման կապանքներն են:

Բուրժուական հասարակութեան վերակազմութեան համար յերկու ուղի կա՝ լիբերալ ե

«պլեբեյական»: Սակայն յերկու ուղին ել մաքրագործում են հասարակությունը ավատական կապանքներից, նրանք մաքրում են ավատականութեան «ավգյան ախոռը»: Իրա մեջ ե բուրժուական հեղափոխութեան իմաստը: Ուստի ե ընկ. Ռադեկի սխալի արմատն այն ե, վոր նա միաժամանակ յերկու դրություն ե հանդես բերում, վորոնցից մեկն ըստ եյութեան հակասում ե մյուսին: Ընկ. Ռադեկի առաջին դրությունը, թե հեղափոխութեան տվյալ շրջանում նա իր առջև բուրժուական խնդիրներ ունի, այսինքն՝ նա բուրժուական հեղափոխություն ե—այդ դրությունը ճիշտ ե: Բայց նա ուղղակի անմիտ բան ե դառնում, հենց վոր մենք ընդունելու լինենք յերկրորդ դրությունը, որը պնդում ե, թե Չինաստանում գրեթե ոչինչ ավատական մնացորդ չկա: Որովհետեւ յեթե ավատականություն արդեն ջախջախված լիներ, յեթե նրա մնացորդները բացարձակորեն չնչին լինեյին, ապա ուրեմն իր զարգացման տվյալ շրջանում բուրժուական մեծ հեղափոխութեան մեծ թափի համար այլևս տեղ չէր լինի:

Այնուամենայնիվ պետք ե խոստովանել, որ գոյություն ունի վաստերի մի ամբողջ շարք, որ կարծես թե հաստատում ե ընկ. Ռադեկի տեսակետը ե անհնար դարձնում այդ հակասութեան լուծումը: Սակայն դա միայն առաջին հայացքից ե այդպես թվում: Այդ մասին պետք ե ասենք մի քանի խոսք:

Չինաստանի հողային հարաբերությունց վերաբերյալ անհրաժեշտ նյութերը մենք բերել ենք մեր գեկուլցի մեջ կոմիտեանի Գործկոմի լայնասիրտ պլենումում: Այստեղ մենք կասմանափակվենք մի քանի ամենատարրական թվերով:

Հողային հարաբերությունց բնագավառում մենք այսպիսի պատկեր ունենք: Գյուղացիների 50 տոկոսը հողը կապալով է վերցնում: Գյուղացիների այն շերտը, վոր ունի ամենամանր անտեսություն — մեկ «մու»-ից մինչև քսան «մու» հող — կազմում է բոլոր գյուղացի ընտանիքների 40,5 տոկոսը: Այսպիսով ամենամանր անտեսությունը կազմում է գրեթե բոլոր գյուղացի ընտանիքների կեսը, ունենալով սակայն հողի միայն 15,9 տոկոսը: Մանր գյուղացիները — 20-ից մինչև 40 մու հող ունեցողները — կազմում են բոլոր գյուղացի ընտանիքների 23,7 տոկոսը և ունեն հողի 22,8 տոկոսը: Յեթե մենք գումարենք այդ յերկու տեսակները, այսինքն՝ վերցնենք գյուղացիության ամենաաղքատ շերտերը, կտեսնենք, վոր գյուղացի ընտանիքների 73 տոկոսն ունի իր տրամագրություն ներքո հողի միայն 38,7 տոկոսը: Իրոք զանազան խմբերի փոխ-հարաբերությունն ավելի աչքի ընկնող է:

Հողագործություն և առևտրի միջնորդության այդ վիճակագրությունը վերականգնված է մի քանի անկետային ստուգումներով, ի թիվս, վորոց հարավ-արևելյան համալսարանի նորեր

կատարած հետազոտությունը, վոր ընդհանուր առմամբ հաստատեց պաշտոնական տվյալները:

Գալով կալվածատերին, պետք է նախ և առաջ նկատել, վոր Չինաստանում այդ տերմինը ծայր աստիճան անորոշ է: Նրա մեջ մտնում են հասարակական-դասակարգային զանազան խմբակցություններ՝ համեմատաբար խոշոր գյուղացիներ, այսպես կոչված «չենտրի»-ներ, պաշտոնյաներ, վաճառական - կալվածատերեր, վերջապես «խսկական» խոշոր կալվածատերեր՝ ավատական, կիսակապիտալիստական և անգամ կապիտալիստական կարգի կալվածատերեր:

Մի ամսագրում, վոր հրատարակում է կանտոնում չինագետների մի խմբակ, չինական գրականության հիման վրա, ցույց է տալիս, վոր գոյություն ունեն կալվածատերեր, վորոնք նույնիսկ հայրուրավոր հազար մու հողի տեր են: Սակայն ընդհանուր առմամբ կալվածատիրական հողատիրությունը առաջնակարգ ֆակտորի դեր չի խաղում, այնպես վոր ընդհանրապես կարելի չէ ասել՝ Չինաստանը մանր հողատիրության յերկիր է: Իրերի այդ դրությունը, առաջին հայացքից, վորոշ անտեսական հանելուկ է ներկայացնում: Իրոք, յեթե կալվածատիրական հողատիրությունը վճռողական դեր չի խաղում, յեթե Չինաստանը մանր հողատիրության յերկիր է, ապա առաջին հայացքից խնդիրը կարելի չէ լուծել շատ հասարակ կերպով: Քանի վոր կալվածատերերը քչվոր են, ապա ուրեմն ավատականություն էլ չկա, վորովհետև

ըստ եյության ավատականությունը մի հասարակարգ է, վորտեղ հողը կալվածատերերին է պատկանում: Հենց այդ հանքամանքն էլ մոլորեցրել է ընկ. Ռադեկին, վորը շուտափույթ յեզրակացություն է արել ու մի հարվածով ջնջել ավատականությունը Չինաստանում և դրանով էլ — հակառակ իրեն իսկ — ջնջել բուրժուական հեղափոխության օբյեկտիվ պատմական իմաստը:

Այնուամենայնիվ, տնտեսական հանելուկը, վորի մասին մենք խոսեցինք վերը, պետք է այսպես թե այնպես լուծել: Միանգամայն պարզ է, վոր այստեղ մեր առջև գտնվում է բարդ խնդիր, մեր առջև այնպիսի մի դրություն է, վոր չի հանդիսանում ավատական «դասական» յերկրների հողային հարաբերությանց հասարակ կրկնողությունը կամ այն յերկրների կրկնողությունը, վորտեղ «դասական» ավատականութունից անցել են նույնչափ «դասական» կամ գրեթե «դասական» բուրժուական ռեժիմին:

Նախ և առաջ պետք է կանգ առնել այն յերևույթի բնորոշման վրա, վոր Չինաստանում վերին աստիճանի տարածված է, այն է՝ կապալառության բնորոշման վրա: Մենք արդեն ասացինք, վոր գյուղացիության 50 տոկոսը կապալով է վերցնում հողը ավելի խոշոր հողատեր գյուղացիներից և կալվածատերերից: Այստեղ պետք է ասենք, վոր անգամ Չինաստանում ապրող մեր ուս ընկերների գրվածքներում «կալվածատեր» բառը մեկ այս, մեկ այն առումով է գործածվում, և տերմինաբանությունը շարունակ

կաղում է: Ահա այդ նկարագրություններից մի քանիսը, որոնք ձեզ հասկանալի կդարձնեն բանի եյությունը: Ահա թե ինչ է գրում Կանտոնի չին հողատիրությունը հետազոտողներից մեկը.

«Չինաստանում գոյություն ունեցող կապալառության ձևերը կարելի յե վերածել յերկու հիմնական տեսակի՝ 1) փողի կապալ, 2) նատուրալ կապալ: Կապալառության առաջին ձևը կիրարկվում է առավելապես հարուստ գյուղացիների շրջանում և համեմատաբար թույլ ծավալ ունի: Յերկրորդ ձևը — նատուրալ կապալը — ի տարբերությունն առաջինի տիրապետող է («Կանտոն» ամսագիր, № 8—9, ընկ. Վոլին:

Ապա՝

«Գյուղացին կապալով է վերցնում հողի այս կամ այն կտորը կալվածատիրոջից կամ ուրիշ գյուղացուց... Նա վճարում է հողատիրույր բերքի վորոշ բաժինը՝ 40—50 տոկոսը կամ ավելին (այդ կապալի ամենատարածված ձևը — այսպես կոչված կիսովի կապալն է)... Կապալի պայմանը կապվում է մի տարով կամ մի քանի տարով (3—4)»:

Ելի՝

«Վերը նկարագրված նատուրալ կապալի ձևերը... Ըստ եյության, — գրում է նույն հեղինակը, — հանդիսանում են ավատական տուրքերի իրորինակ ձևը, վոր քողարկված է կապալի արտաքին տեսույթով: Գալով աշխատուկապալին, վոր նկարագրված է վերը, ըստ իր տնտեսական

իմաստի դա պարզապես կալվածատիրոջ համար աշխատող ձեռք հայթայթելու ավատական միջոց ե (նույն տեղը):

Այս մեջբերումներն, ըստ եյուլթյան, բավական են: Մեր առջև դժագրվում ե մի պատկեր, վորի ամենաիրական դժերն այնպիսի փաստեր են, ինչպես՝ աշխատակապալը, բերքի կեսը, կապալի նատուրալ ձևը, այս վերջինի տիրապետությունը և այլն:

Այդ առիթով ընկ. Ռադեկին ասում ե՝

«Գյուղացիների կեսը կապալառու կամ կիսակապալառու յե: Յե՛վ կապալն այստեղ մեր ասած կիս-ավատական կապալը չե (այդ բանը չի հասկանում նույնպես ընկ. Վոլինը). դա կապալի նոր, կապիտալիստական ձևն ե, յերբ կալվածատերը հանդիսանում ե առևտրական կապիտալը, վաճառականը, պաշտոնյան, վոր տեղակում ե իր փողը, պարտք տալով գյուղին: Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, վոր արդյունագործության հապաղած զարգացումը նրանց թույլ չի տալիս մտցնել իրենց կապիտալը արդյունագործության մեջ: Դուք գիտեք, վոր Չինաստանի բանկաները վատ են, կոտր են ընկնում, ինչպես ասում ե Շչեդրինը, իսկ արդյունագործությունը—մատղաջ ե, անփորձ, աշխատում ե առանց ղեկավարի, մաքսային պաշտպանություն-

նից զուրկ ե, ուստի և վտանգավոր ե արդյունագործության մեջ փող դնելը: Իսկ այստեղ, պարզ բան ե, կառավարությունը գյուղացուցչորս տարով նախապես ե հարկ հավաքում: Գյուղացին ուրիշ յելք չունի: Նա գնում ե վաճառականի մոտ և պարտք անում: Այսպիսով վաճառականը սեփականատեր ե դառնում և գյուղացուց պոկում ե 50-60-70 տոկոս, վորպես կապալվարձ»: (Ընկ. Ռադեկի կնմ. ձեմարանում արած զեկույցի սղագրությունից):

Նախ և առաջ ընկ. Ռադեկի այս դատողության մեջ անհասկանալի յե հետևյալը՝ յեթե գյուղացին ուրիշ յելք չունի և նա վաճառականից փող ե պարտք վերցնում ու հետո վճարում պարտք արած գումարի տոկոսը, ապա ինչո՞ւ դա կապալվարձ ե կոչվում: Կապալվարձ ե կոչվում այն վարձը, վոր վճարվում ե կապալով վերցված հողի համար: Յեթե մեկն ու մեկը վաշխառուին տոկոս ե վճարում այն գումարի համար, վոր նա պարտք ե ստացել—դա կապալվարձ կոչվել չի կարող: Այդպես ե յեղել համաձայն բաղաբառնաբանության որինաց մինչև որս: Վորտեղից դուրս յեկավ կապալվարձը, միանգամայն անըմբռնելի յե:

Ապա՝ ընկ. Ռադեկը բանակովելով ընկ. Վոլինի դեմ, չհերքեց հետևյալ հիմնական նկատառումը: Յեթե կապալվարձն առնվում ե նատուրալ ձևով, յեթե նա աշխատանքով կամ բերքի բաժնով ե հատուցվում, յեթե նա նա-

տուրալ յեղանակով ե վճարվում, յեթե նատուրալ ձևերը գերի շխոււմ են, ապա դա ուտար կապիտալի ազդեցութեան ներքո առաջ յեկած «կապիտալիստական կապալի նոր ձև» անվանել վոչ մի դեպքում չի կարելի: Այդպիսի բնորոշումը շուռ ե տալիս և գլխի վրա դնում բոլոր մարքսիստական սովորական տնտեսական հասկացողութեանները*:

Կարելի յե ասել, վոր այստեղ առևտրական և վաշխառուական կան կա-

* Ահա ինչ ե գրում այդ առիթով Մարքսը.

«Շնորհիվ այն հանգամանքի, վոր այդ ձևը, սենտան բերքով վճարված, կապված ե բերքի վորոշ բնավորութեան և իրեն խկ արտադրութեան հետ, շնորհիվ նրա գործադրութեան պահին պուղատնտեսութեան և սնանագործութեան անհրաժեշտ կապի, շնորհիվ այն հանգամանքի, վոր նրա գործադրութեան շրջանում պուղացի ընտանիքը միանգամայն ինքնամիտի բնույթ ե ստանում, վորովհետե անկախ և շուկայից, արտադրութեան փոփոխութեաններեց, իրենից դուրսը յեղած հասարակութեան մեջ տեղի ունեցող պատմական շարժումից, կարճ՝ շնորհիվ առհասարակ բնական տնտեսութեան բնույթի, այդ ձևը ավելի քան պիտանի յե հասարակութեան անշարժ կացութեան բազիս ծառայելու համար, ինչպես մենք այդ դիտում ենք որ ինակ Ասիայում: Այստեղ, ինչպիսե ավելի վաղ ձևը աշխատանքով վճարվող ունտան, հողային ունտան հավելյալ արժեքի նորմալ ձևն ե, ուստի և հավելյալ աշխատանքի, այսինքն՝ ավելցուկ աշխատանքի, վոր անմիջական արտադրող հարկադրված ե ձրիապես կատարել իր աշխատանքի կարևորագույն պայմանի տիրոջ՝ հողատիրոջ համար,— թեև այդ հարկադրանքը արդեն նրա դեմը չի կանգնած հին, դժնի ձևով» (Մարքս, «Կապիտալ» հ. 3, էջ 332, հրատ. Պետրոպոլի, 1923 թ.):

ուրտալն աճել - կպել ե կիս - ավատական կապալի ձևին — դա ճիշտ կլինի: Այնպիսի դեպքեր ել են պատահում, — և նույն իսկ շատ հաճախ, — յերբ վաշխառուն և առևտրական կապիտալիստը անհատապես նույն անձինքն են, վոր հողը կապալով են տալիս: Սակայն դրանից հետևցնել, թե փողը տոկոսով տվող վաշխառուն ոչ այլ վոք ե, բայց յեթե հողատերը, և այն, ինչ նաստանում ե, վոչ թե փոխառութեան տոկոսն ե, այլ կապալավարձը և վոր կապալի նատուրալ ձևը քիչ ե մոււմ կապիտալիստական կապալի ամենանոր և ամենագարգացած ձևը լինի — դա կնշանակի յերևան բերել անխտրութեան մարքսիստական քաղաքատնտեսութեան տերմինների գործածութեան մեջ:

Ընկ. Ռադեկը մոլորվել ե զանազան տնտեսական հարաբերութեանց վերլուծութեան մեջ և կատարյալ հակասութեան մեջ ընկել ինքն իր դեմ, իր իսկ դրութեան դեմ՝ հեղափոխութեան բուրժուական բնույթի մասին, քաջըստելով զանազան փաստեր՝ իր յերկրորդ դրութեանն ապացուցանելու համար, այն ե՝ ապացուցել, վոր Չինաստանում ավատականութեան չկա: Ընկ. Ռադեկը չի նկատել, վոր դրանով նա սպանել ե իր սեփական դրութեանը հեղափոխութեան բուրժուական բնույթի մասին:

Արդ, յեթե Չինաստանում գոյութեան ունի, իբրև տիրական տող տիպ, կապալի նատուրալ բնույթը, բերքի կեսը, վարձի փոխարեն աշխատանք և այլն — ապա ուրեմն դա կիսավատա-

կան կարգի մնացորդն է, որ, հասկանալի չէ, հյուսվում է կապիտալիստական ձևերի հետ, վորոնք ներթափանցում են գյուղը ու առաջին հերթին՝ փոխառման, վաշխի և սուստրական կապիտալի ձևերի հետ. մի բան, վոր չափազանց բնորոշ է յեղել, սուսնք, յեվրոսյական միջնադարի համար*:

Այսու հանդերձ դա ասկավին խնդրի դրական լուծումը չէ: Մեր առջև մնում է այն փաստը, վոր կալվածատիրական հողատիրությունը Չինաստանում վճռական դեր չի խաղում, և այնուամենայնիվ հողային, գյուղացիական խնդիրները հանդիսանում են չին հեղափոխության ծայր աստիճանի սուր խնդիրները, հանդիսանում են վորոշ չափով կատարվող անցքերի առանցքը: Այստեղ պետք է ի նկատի ունենանք,

* Պետք է, ի միջև այլոց, հիշել, վոր սուստրական ու վաշխառուական կապիտալի ազդեցությունը շատ վաղ ժամանակից հյուսվում է ավատականության հետ, և այդ ազդեցության ներկայությունը բնավ ավատականության «բացակայության» արդյունք է հանդիսանում: Մի պտայծառ որինակ՝ Կառլոս V-ը, վոր 1920 թ. ընտրված իր գերմանական իմպերատոր, ըստ էյուլթյան «հաղթեց» Ֆրանցիսկին Ֆուգգերի բանկային տան միջոցով: Յերբ վոր հետագայում ռայխստագը մի շարք միջոցներ ձեռք առավ ընդդեմ սուստրականների և վաշխատուների, Ֆուգգերի տան գլուխը գրեց իմպերատորին՝ «Հայտնի չէ, վոր Ձերը Մեծությունը չիբ կարող առանց իմ ոգնության թագ ձեռք բերել. մի բան, վոր յս կարող եմ ապացուցել ձեր հովատարմատարների ստորագրություններով»: Այնուամենայնիվ նույնիսկ նման փաստերը բնավ չեն հերքում ավատականության գոյությունը այն միջոցին, և ամեն վրջ տեսնում է, վոր նման փաստարկում պարզապես ծիծաղելի կլինի:

վոր այդ խնդիրները, տնտեսական վերլուծության տեսակետից, ահագին դժվարություններ են ներկայացնում: Նրանք ահագին դժվարություններ են ներկայացնում այն պատճառով, վոր չին տնտեսության վերաբերյալ յեղած գրականության մեջ չկան պարզորոշ պատասխաններ փաստերի «մաքուր նկարագրության» տեսակետից, և այստեղ պետք է հանդես բերենք մի քանի յենթադրություններ (հիպոթեզ), մեր առջև կանգնած խնդրի լավագույն լուծման վերաբերյալ միջանի կռահումներ:

Չինաստանի գյուղատնտեսության վերլուծության միջոցին, վորտեղ, ըստ. ընկ. Ռադեկի, ավատականության հետքեր չկան, մինչև որս վիճում են՝ Չինաստանում հողի մասնավոր սեփականություն կա, թե՛ չկա: Այդ հարցի մասին յերկու կարծիք կա: Վոմանք պնդում են, թե Չինաստանում հողի մասնավոր սեփականություն չկա: Ավելի վողջամիտ են դատում Չինաստանի տնտեսության այն հետազոտողները, վորոնք հակառակ տեսակետի վրա յեն կանգնած: Այսու հանդերձ այդ վեճի տակ կա խորը հիմք: Դեռ Մարքսի «Կապիտալի» յերրորդ հատորի մեջ, ռենտայի վերլուծության միջոցին, հիշատակվում է ավատական հողատիրության մասին, յերբ հողը համարվում էր իմպերատորի, «յերկրի վրա սստծու փոխարքայի» սեփականություն, պատկանում է նրան ձևականորեն-իրավաբանորեն, իսկ ավատական «տիրապետության և հպատակության» սանդուղի մնացած բոլոր անդամները

հանդիսանում են հողատերեր, բայց վոչ այդ հողի սեփականատերեր: Անտա-
րակույս այդորինակ շրջան յեղել է նայել Չինաս-
տանում, և բանը դեռ այնտեղ չի հասել, վոր այդ
շրջանը լիովին դառնա իր կատարյալ հակադրու-
թյունը: Այդ հարաբերություններից շատ թե քիչ
մի բան մնացել է*:

* Ընկ. Ռադեկի յեզրակացությանց շուտափութության
գնահատության համար չափազանց բնորոշ է հետևյալ փաստը:
Իր դասախոսությունների մեջ («Չինաստանի հեղափոխական
շարժման պատմությունը» 1926-27 թ. դասընթաց. հրատ. Սուն-
Յատ-Սենի անվան համալսարանի) ընկ. Ռադեկն ասում է.

«Չինաստանը գիմավորեց կապիտալիստական աշխարհին,
վորպես հողի մասնավոր սեփականատերական յեր-
կիր: Բոլոր խորիմաստ խնդիրները հողի սեփականության բնույ-
թի մասին Չինաստանում, վոր հարուցել են յեվրոպական գրա-
կանության մեջ, ազիստության հետեանք են, հետեանք
են այն հանգամանքի, վոր յեվրոպական ճամբորդները
և Չինաստանի մասին մակերեսային գրողները լսել են, վոր իմ-
պերատորը համարվում է աստված, վոր նա շատ ուժեղ է ու
հանդիսանում է հողի սեփականատերը և ապա՝ առանց վորևե
ստուգման՝ հաղորդել են իրենց տեղեկություններն ընթերցողին:
Յերբեմն մեր ընկերներն ել փոխանակ հիմնական աշխատասիրու-
թյուններ կարդալու, կարդացել ու կարդում են այն հրատարա-
կախոսությունը և այդպիսով ի վիճակի չեն ցրելու կիտված
մշուշը կարևորագույն խնդիրների շուրջը» (Էջ 6-7): Ընկ. Ռադեկը
հիմնավորում է այդ դատողությունը գլխավորապես մի ուսս
վարդապետի, հայր Իակինֆի աշխատասիրությամբ: Մինչդեռ ահա
թե ինչ է գրել վոչ անհայտ «հրատարակախոս» Կարլ Մարքսը.
«Յեթե նրանց գեմ կանգնած են վոչ թե հողի մասնավոր սեփա-
կանատերերը, այլ անմիջապես պետությունը, իրեն հողի սեփա-
կանատեր է միտամանակ սուվերեն, ինչպես այդ կարելի յե զի-
տել Ասիայում, այն ժամանակ ունեսան ու տուրքը նույնանում
են կամ, այնպիսի ճիշտ, այն ժամանակ գոյություն չունի վոչ մի

Չինաստանում գոյություն է ունեցել ավատա-
կան բարդ յերաբխիա, բարդ պետական. ապա-
րատ, վորի մեջ խշոր ավատատերը, վոր ստորա-
դասվել է իրենից ավելի խշորին, դատ ու դա-
տաստան է արել, զինվորական պետ, «խշխան»
է յեղել և միաժամանակ կալվածատեր, միաժա-
մանակ տուրք հավաքող և այլն: Չինաստանում,
ուր տեղի յեն ունեցել հսկայական ապստամ-
բություններ, ավատական կալվածներն, ըստ
յերեվույթին, մի քանի անգամ բաժան-բաժան
են յեղել, նորից վերականգնել, դարձյալ բաժան-
բաժան յեղել և ներկայումս ավատական հարա-
բերությանց մնացորդներն են հանդիսա-

տուրք, վոր տարբեր լինել հողային ունետայի այդ ձևից: Այդ-
պիսի պարագաներում հնարավոր է, վոր հպատակության ձևը
բաղաբականորեն և անտեսապես ավելի դաժան ձև չունենա, քան
այն հպատակությունը, վոր բնորոշում է բոլոր հպատակների
գրությունը պետության հանդեպ: Այստեղ պետությունը հողի
գեբագույն սեփականատերն է: Սուվերենիտանս այստեղ հողի սե-
փականությունն է, վոր կենտրոնացած է ազգային մասշտաբով:
Բայց այդ պատճառով ել այս գեպըում հողի վոչ մի մասնավոր
սեփականություն գոյություն չունի, թեև գոյություն ունի
թե մասնավոր, թե համայնական հողատիրություն» (Կ. Մարքս,
«Կապիտալ», հ. 3—II, 327):

Այսպիսով ընկ. Ռադեկը, կուրբրեն հավատարով Իակինֆի
վկայություններին, Մարքսին դարձրեց «տգետ», «մակերեսա-
յին գրող», «ճամփորդ», «հրատարակախոս», «մշուշով պատող» և
այլն: Մինչդեռ պարզ է, վոր միմիայն բուրժուական հրապարա-
կախոսներին է հատուկ հողի մասնավոր սեփականությունը հա-
վերժական կատեգորիայի վերածելը վոր գոյություն է ունեցել
սկսած աշխարհի ստեղծագործությունից և պետք է գոյություն
ունենա «հավիտայան հավիտանից»:

նում: Սակայն հնի ամենագլխավոր մնացորդը հետևյալն է՝ հողային տուրքերը հավաքվում են այնպես, ինչպես կամենում է տեղական գլխավոր վարիչը (ադմինիստրատոր), «նահանգապետը», «միլիտարիստը» և այլն: Այդ վարիչը իրավաբանորեն հողի տերը չէ, հողը նրա ժառանգությունը չէ, նրա կարվածը չէ: Սակայն հին ավատական կարգերի մնացորդն այն է, վոր այս հողից հավաքած տուրքով ենա կերակրվում: Դա կոչվում է «տուրք» և չի կոչվում ունտա՝ սնտեսական տերմինաբանության տեսակետից: Սակայն յերբ վոր այդ վարիչը հակայական տուրք է առնում, առնում է առանձուց չորս տարվա տուրք, վորը արտածում է վոչ միայն հավելյալ պրոդուկտը, այլև հաճախ անհրաժեշտ պրոդուկտը, միանգամայն քամելով ազգաբնակչությունը, այն ժամանակ դա՝ քիչ է զանազանվում այն գրությունից, յեթե նույն այդ «ադմինիստրատորը» իր կալվածն ունենար և մշակեր այն գյուղացիների ձեռքով: Ահա այսպիսի վիճակ է այժմ տիրում Չինաստանում: Հետևաբար ավատական կարգը պահպանվել է, բայց կ ե ր պ ա ր ա ն ա փ ո խ ո ր ի գ ի ն ա լ ձ և ա կ ե ր պ ու թ յ ա մ բ: Անվիճելի յե՝ դա ս ո վ ո ր ա կ ա ն ավատականութունն չէ, այնու հանգերձ մի շարք խոշորագույն ավատական ինստիտուտներ և սնտեսական կենցաղի գծեր այստեղ ակներև են: Այսպես կոչված «միլիտարիստները», վոր նստած են իրենց գավառներում, վոչ այլ ինչ են, բայց յեթե հ ի ն

ա վ ա տ ա կ ա ն ի շ խ ա ն ն ե ր ի մ ն ա ց ո ր դ ն ե ր,* և հաճախ հանդիսանում են վորպես խոշոր կալվածատերեր. նրանք գործադրում են իրենց պետական և պատժական ապարատը, իրենց բովանդակ իշխանությունը՝ տուրքեր հավաքելու նպատակով: Անգամ յեթե նրանք ձևականորեն - իրավաբանորեն հող չունեն, փաստորեն հողը նրանց է պատկանում, վորովհետև փաստորեն նրանց է պատկանում հողի արդյունքների մեծ մասը: Դրա մեջ է ավատականության գլխավոր մնացորդը: Մնացորդների շարքը պիտի դասել առաջին հայացքից այն անըմբռնելի յերևույթը, վոր պաշտոնեյությունը նշանակալից չափով հ ո գ ա տ ե ր է (ավելի ճիշտ՝ պաշտոնյաների նշանակալից սովոր հողի սեփականատեր է): Նույն շարքի մեջ է մտնում այսպես կոչված լի կ ի ն ը (կամ լիճինը), մի տուրք, վոր հաստատվել է XIX-րդ դարում, վոր ավատական ձև ունի (տեղական նշանակչություն ունեցող մաքսատներ, վորտեղ գանձվում են հակայական տուրքեր և այլն և այլն):

Ահա թե ինչպես են լուծվում այն մակերեսային հակասությունները, վորոնք միանգամայն մուրեցցրել են ընկ. Ռադեկին: Յեթե մենք հարցն այդպես դնելու լինենք, հետևյալ պատկերը

* „Յերկիրը բաժանված է 18 գավառի, վորոնց մեծ մասը ներկայացնում է հին ավատական պետությունների մնացորդը և վորոնցից շատերը Պրուսական թագավորության չափ մեծ են...»: China Wirtschaft und Wirtschaftsgrundlagen, hg von Dr. J o s e f Kellauer, Berl. u. Lpz. 1921, S. 4.

կատանանք՝ ն ե ր ք ի ն ճակատում պատերազմը հյուսիսային միլիտարիստների դեմ է: Բուրժուական հեղափոխությունն ուղղել է իր սուրն ընդդեմ այդ ավատական ավազակների, ընդդեմ ավատատեր-կալվածատերերի, վորոնց մի մասը հող ունի իրավաբանորեն, իսկ մյուսը իրավաբանորեն չունի, բայց ունի փաստորեն, տրամադրելով այդ հողի արդյունքների ահագին տոկոսը: Այն իսկ պատճառով, որ պայքարը այսպես կոչված «միլիտարիստների» դեմ է, վորոնք ավատական կապանքներ են ներկայացնում, պատմական զարգացման խոչընդոտ են հանդիսանում, նրանց դեմ կարող է յեղնել (և մի ա ժ ա մ ա ն ա կ յեղնել է) ազգային բուրժուական: Հենց դրա մեջ է Չինաստանի բուրժուական հեղափոխության հիմնական բովանդակությունը, յերբ վոր խնդիրը ներքին դասակարգային ուժերի մասին է:

Բայց ավատականության կետի վերաբերմամբ մենք կկամենայինք նիշել մի փաստ ևս, վոր խնդրի լուծման համար ունի վորոշ նշանակություն: 1925 թ. դեկտեմբերի 15 մինչև 1927 թ. հունվարի 1 ժամանակաշրջանին վերաբերյալ գեկույցի մեջ չին տնտեսության մասին մենք գտնում ենք ուղղակի ցուցմունք «ճորտատիրական կախման» մնացորդների մասին:

Բերում ենք բառացի համապատասխան կտորը.

«Հետաքրքրական է նիշել, վոր Գուանդունում գոյություն ունի ստրկություն վոչ միայն...

ընտանիքի մեջ: Ստրկությունը գոյություն ունի նույն հողային հարաբերությունների մեջ, և նորերս պատահմամբ գտված են մի շարք շըրջաններ, վորտեղ հողագործ մշակները (բատրակները) ճորտ են: Նրանք իրավունք չունեն ամուսնանալու, իրավունք չունեն լքելու կալվածատիրոջ հողը, ամսական 3 ցենտ են ստանում, իբրև ոռճիկ և այլն: Ավելի մարան մասն բնույթագիծ տալ առ այժմ չենք կարող, վորովհետև նույն Գուանդունի մեջ հիմա այդ խնդիրն ուսումնասիրվում է: Սակայն փաստ է, վոր Չինաստանի այլ գավառներում ել գոյություն ունեն նման հարաբերություններ, ինչպես Շանդունի մեջ, վորտեղ կապալառուների մի ամբողջ կատեգորիա կալվածատերերի ստրկներն են:

Վատ իլյուստրացիա չե ընկ. Ռագեկի «կապալի նորագույն ձևերի» համար:

Այս կապակցությամբ պետք է սովի մի քանի խոսք ընկ. Ռագեկի ընդհանուր մեթոդական մասին Չինաստանի տնտեսական հարաբերությունաց զարգացման ընթացքի նկատմամբ: Նրա ընդհանուր ըմբռնողությունն այս է՝ վորովհետև Չինաստանում քաղաքները դանդաղ են աճում, վորովհետև քաղաքներում կապիտալիստական զարգացման ընթացքը համարցած է, կապիտալը ձգտում է անցնել գյուղը, տեղի յե ունենում գյուղատնտեսության կապիտալացումն

և իբրև թե այդ պատճառով ավատականության հետքն անգամ չի մնացել: Այս ըմբռնողությունն ամեն ինչ շուռ ե տալիս գլխիվար: Բանը բնավ այն չի, թե վոքով հետև քաղաքները դանդաղ են զարգանում, տեղի յե ունենում կապիտալիզմի ներթափանցում գյուղատնտեսության մեջ՝ և վերջինս քայքայվում է: Իրոք իրերի կապակցությունն ընդհակառակն է: Վոքով հետև ավատականության մնացորդները խոշոր խոչընդոտ են հանդիսանում գյուղացու համար, վոքով հետև «միլիտարիստները» անխիղճ կերպով թալանում են աջ ու ձախ, վոքով հետև նրանց հետ ձեռք ձեռքի տված գործ են տեսնում կալվածատերերը, վորոնք դասակարգային թալանի և կեղեքման յուրահատուկ ձևեր են ստեղծում, վոքով հետև գյուղատնտեսական հսկայական գանգվածը աներևակայելի տուրքերի ծանրության տակ, կապալի վարձի ծանրության, վաշխառուական ստրկության (կարայա) ծանրության, միլիտարիստական «բանակների» անդադրում ավազակային հարձակումների տակ քայքայվում է, այդ պատճառով ել քայքայվում է նայեվ ներքին շուկան: Վոքով հետև աղքատացման այդ պրոցեսսը ճշմարտապես հսկայական է, ուստի տեղական արդյունաբերության արագ զարգացման և քաղաքի աճման համար բավականաչափ հիմք չկա: Դա, իր հերթին, նպաստում է, վոր գյուղացիները դառնան վոչ թե պրոլետարներ, այլ աղքատներ, վորոնք նստած են հողի վրա կամ

դնում, ինչպես ասում են, «բանդիտ» (ավազակ) դառնում, վորոնք քաղաքներում թափառական աղքատների հսկայական բանակներ են կազմում և այլն, և այլն:

Յերևույթների իրական կայն այս է:

Ոտար իմպերիալիզմի դերը, վորի մասին շատ քիչ բան է ասված ընկ. Ռադեկի ղեկույցի մեջ (շատ բնորոշ է), անագին նշանակություն ունի չին հեղափոխության քաղաքական խնդիրները բնորոշելու համար: Իմպերիալիզմը նախ և առաջ բլոկի մեջ է ավատակալնության, իբրև առավելապես հետադիմական ուլտի հետ: Դա միանգամայն հասկանալի յէ: Նման դրություն մենք ունենք մի շարք գաղութային և կիսագաղութային յերկրներում, և միջազգային հեղափոխության տեսակետից՝ այդ փաստն իհարկե ունի ամենամեծ նշանակությունը: Այսպիսով հեղափոխության հակաավատական բնույթը ձուլվում է հակաիմպերիալիստական բնույթի հետ: Ճիշտ այդպես ել հակաիմպերիալիզմը Չինաստանի հեղափոխության գլխավոր առանձնահատկությունն է, վոր առաջ է գալիս Չինաստանի տնտեսական և քաղաքական հարստահարության կիսադադուլի ն ձևից: Մեզանում, Ռուսաստանում ել ոտար կապիտալը բավական մեծ դեր եր խաղում: Մեզանում ել եր ոտար կապիտալը «բեզմնավորում» արդյունագործությունը և հետևապես ապրեցնում կապիտալիզմի գերեզմանափորներին: Կապիտա-

լիստական հարաբերութեանց զարգացման աստի-
ճանը մեղանում ավելի բարձր եր, քան բուն ու-
սական բուրժուազիայի և ուսական «ազգային»
կապիտալինը: Հետևաբար պրոլետարիատը մե-
ղանում, թվական տեսակետից, այսպես ասած,
անհամաչափ ուժեղ եր: Չինաստանում անտե-
սութեան այդ զիծը և հետևաբար բանվոր դա-
սակարգի ու տեղական բուրժուազիայի միջև
յեղած փոխ-հարաբերութիւնն՝ ավելի ցայտուն ե:
Մյուս կողմից կապիտալի ներածումը Չինաստան
այլ բնույթ ունի, քան ունեցել է կապիտալի ներա-
ծումը ցարական Ռուսաստան: Չինաստանում
նոտար կապիտալը հանդես է գալիս ավելի մեծ
չափով, վորպես տեղական արդյունագործութեան
զարգացումը կասեցնող տ եր: Նա շահագործում
է Չինաստանը, վորպես մի գաղութային
յերկիր: Ռուսաստանում բանը բնավ այդպես չի
յեղել: Ահա չին անտեսութեան այդ զիծը և տըն-
տեսական կախումն ոտար իմպե-
րիալիզմից պետք է առաջ քաշել
առաջին պլանի վրա: Այս կախումը լուսաբանող
թվերն ըստ արդյունագործական առաջին ճյու-
ղերի և բուրժուազիայի զանազան ազգային խմբակ-
ցութիւնների՝ իր ժամանակին մենք արդեն ավել
ենք: * Այդ ավյալները ցույց են տալիս, վոր
յեկամուտի գլխավոր աղբյուրները՝ յերկաթու-
ղիները, ջրային յերթեկութեան միջոցները,
հանքերը, ծանր արդյունագործութիւնը—նշա-

* Տես որինակ, կոմունիստական Ինտերնացիոնալի Գործա-
զեր կոմիտէի լոյսնախտ պլենումի մեջ մեր արած զեկուցումը:

նակալից չափով, իսկ այնպիսի ֆինանսական-
անտեսական բնագավառներ, ինչպես մաքսա-
տունը—զրեթե ամբողջապես ոտար կապի-
տալի ձեռքին են: Ահագին նշանակութիւն ունի
նոտարերկրացիների ձեռքին գտնվող բանկային
սիստեմն ու վաշկը, վորը սուետրական և
վաշխառուական կապիտալի միջոցով կապված են
սզգաբնակութեան ահագին փոշիացած զանգ-
վածի հետ: Յեվ վերջապես մեծ նշանակութիւն
ունեն զանազան արտածման գործողութիւններ,
մասնավորապես հ ու մ ն յ ու թ ի հ ա վ ա-
ք ու մ ը ար տ ա ծ մ ա ն հ ա մ ա ր. սա կատար-
վում է կոմանդորների, վաճառականների կապի-
տալի, համապատասխան գործողութիւններ վա-
րող բանկաների միջոցով, վորոնք ոտար կապի-
տալի համար շահագործումի կապ են ստեղծում
չին ազգաբնակութեան ամենախոր խավերի և,
առաջին հերթին, գյուղացիութեան հետ:

Այսպիսով այստեղ մենք ունենք ծայր աս-
տիճան բարի կապ ավատական անդրջրհե-
ղեղյան ֆուսցորգների, տեղական աուետրական ու
վաշխառուական կապիտալի և ոտար իմպերիա-
լիստի ամենաարդիական ձևերի միջև: Այդ
ամենը կաշում է իրար մի սիստեմի մեջ, վոր և
ահուելի շահագործական ճնշում է գործա-
դրում Չինաստանի ազգաբնակութեան հիմնա-
կան զանգվածի վրա, այսինքն՝ առաջին
հերթին գյուղացիութեան վրա: Ոտար կապիտա-
լի բլոկը ավատական ինստիտուտների և միլի-
տարիստական ապարատի հետ, վորոնց սրերի

ծայրին նստած են դավաճների «կառավարողները» — ճշմարիտ վոր շահագործման բեհեղզեբուղյան մեքենա յե ստեղծում, վոր ճգմում ե ազգաբնակուծյան ամենալայն զանգվածներին: Ահա այդ մեքենայի դեմ ե առաջին հերթին ուղղված միմա չին հեղափոխուծյան ամբողջ ընթացքը:

Այս հանգամանքը վերացնում ե չին հեղափոխուծյան նմանուծյունը այն տիպի ազգային-ազատագրական շարժումների, վոր տեղի յեն ունեցել Յեվրոպայում անցած դարում: Վորովհետև Չինաստանում գաղութային և կլիսագաղութային հարստահարուծյուն ե տեղի ունենում, այդ հանգամանքը վերացնում ե նույնպես հնարավորուծյունը և որին աշափուծյունը՝ նմանեցնելու այն մեք հեղափոխուծյան հետ, վորովհետև մեզանում ոտար կապիտալը կանգնած չի յեղել դեմ առ դեմ մասսայի առաջ այնպես, ինչպես նա կանգնած ե Չինաստանում: Մեք մասսան դեմ առ դեմ Բաղվեց ոտար կապիտալի հետ միմիայն առաջին ինտերվենցիայի ժամանակ: Գաղութային-իմպերիալիստական հարստահարուծյունը Չինաստանում այն տեսակ ե, վոր այդ հարստահարիչ մեքենայի ճնշումը հասնում ե ազգաբնակուծյան ամենախոնարհ խավերին: Դրանից ե ատելուծյան այն հսկայական մթերումն, վոր ուղղված ե ալպես կոչված միլիտարիստների, այսինքն՝ ավաաական տերերի, ավազակների, կառավարիչների և ոտարկա պիտալիստների դեմ. այն ոտա-

րերկրացիների դեմ, վորոնք յեկել և հետները բերել են դամչի, թուր, թնդանոթ, անլուր շահագործում և ավետարանական հեղուծյան քարոզ: Ինքնին հասկանալի յե, վոր ավատակնն ձևերի և միջազգային իմպերիալիզմի համակեցուծյունը չին հեղափոխուծյանը հաղորդում ե հսկայական թափ և միջազգային նշանակուծյուն:

Այստեղից ամենակարևոր յեզրափակուծյունն այն ե, վոր առաջինը՝ պայքարը իմպերիալիզմի դեմ Չինաստանում հսկայական համաշխարհային յերեվույթ ե, յերկրորդը՝ այդ պայքարը խաչաձևվում ե պայքարի հետ ընդդեմ ավատականուծյան: Ուստի, քանի վոր հետագայում մենք պիտի մոտենանք գործնական քաղաքականուծյան զանազան խընդիրներին, ապագայի համար կարող ենք հետևյալ հիմնական յեզրակացուծյունն անել՝ «մտքից հանել», ի նկատի չառնել և ամենակարևոր տեղը չտալ պայքարին ընդդեմ իմպերիալիզմի՝ մի կողմից, և ընդդեմ ավատականուծյան՝ մյուս կողմից, չի կարելի: Դա սխալ կլինել կուսակցական տաքտիկան կազմելիս՝ չինական հեղափոխուծյան ճամբի տվյալ մասում, անցնելիք ճամբի տվյալ վերելքում:

4. ՉԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հետևյալ հարցը չին հեղափոխու-
թյան հեռանկարների խնդիրն է:
Նախ մենք այդ խնդիրը կդնենք ընդհանուր ձե-
վով, իսկ հետո կտանք առարկայական վերլու-
ծում ազգային-հեղափոխական ճակատի ներսում
ծավալվող դասակարգային պայքարի և դրա հետ
կապված դասակարգային ուժերի խմբակցու-
թյունների նոր դասավորման ու շարժման
առարկայական հեռանկարների:

Նախ և առաջ մի քանի խոսք չին հեղա-
փոխության հետագա զարգացման
յերկու հեռանկար գծելու հնարա-
վորության մասին: Ընկ. Ռադեկին ելե
յեկել այդ մտքին և դեմ առել «վոչ-կապիտա-
լիստական զարգացման» հասկացողությանը:

«Վոչ-կապիտալիստական զարգացումը» հին
տերմին է: Նա գործ է ածվել մեր բանակովի
մեջ նարոդնիկների դեմ շատ վաղ ժամանակ և
տարակույս չկար, թե ի՞նչ եր հասկացվում
«վոչ-կապիտալիստական զարգացում» ասելով:
Վորպեսզի վոչ մի կասկած չմնա, կարելի յե
մի անգամ ել ընդգծել, վոր յերբ մենք այդ
տերմինը գործ ենք ածում, խոսքը դեպի

սոցիալիզմն ընթացող զարգացման մասին
ե լինում: Թեյեվ, իհարկե, այդ չի բանը: Ավելի
մեծ ուշադրության ե արժանի ընկ. Ռադեկի
նկատողությունն այն մասին, թե միայն մի
հատիկ հեռանկար ունի չին հեղափոխությու-
նը, և այդ հեռանկարն է՝ զարգացում դեպի սո-
ցիալիզմը:

Յեթե միայն մի հատիկ հեռանկար գոյու-
թյուն ունենար չին հեղափոխության համար,
թյուն ունենար չին հեղափոխության համար,
դա, իհարկե, չափազանց հաճելի կլիներ, ու-
դա, իհարկե, չափազանց հաճելի կլիներ, ու-
կայն, տարաբախտաբար, բանը ավելի բարդ է:
Ինքնին հասկանալի յե, յեթե ընկ. Ռադեկի պես
դուրս գցես ավատականության դեմ պայքարի
պատմական խնդիրը և միաժամանակ մոռացու-
թյան տաս ոտար իմպերիալիզմի դեմ պայքարի
խնդիրը, գործն առհասարակ շատ կհեշտանա: Մի
բան, վոր ավատականություն չկա, — մնում ե
ուրեմն հեղափոխության զարգացման մի հատիկ
հեռանկար՝ սոցիալիստական զարգացումը: Իսկ
հեղափոխական հեղափոխության խնդիրը
յեթե բուրժուական հեղափոխության խնդիրը
վերջնականապես դեռ չի լուծված, ապա ուրեմն
խնդիրը շատ ավելի բարդ է:

Իսկապես, միթե անհնար ե հետագա պայքարի
հեռանկարը, բայց կոմպրոմիսներով (զիջումնե-
րով): Միթե չի տրված խնդրի «կիսալուծում»՝
ընթանալ դեպի այն, վսր տակավին չկա և
դեպի վորը, հետևաբար, կարելի յե «շարժվել»:
Միլիտարիստներին շախշախել, բայց ավա-
տականության մոռացողները արմատիկ
չանել և հողային հեղափոխություն չը

կատարել: Հաղթել իմպերիալիստներին, բայց նրանց հետ համաձայնութեան գալ՝ յերկրի տնտեսութիւնը միասին խնամակալելու և կապիտալիստաբար ղեկավարելու նպատակով: Մի շարք հասարակական վերանորոգութիւններ անել, բայց դրանց շրջանակից և վնչ մի դեպքում դուրս չգալ: Ընթանալ բանվորներին հետ, բայց վնչ մի դեպքում նրանց չհանձնել գերիշխանութիւնը և ղիկտատուրան: Այս ծրագիրը կա, գոյութիւնների ձեռքին չլինել, յետ միլիտաներին հասցված լինել վճռական հարված, այն ժամանակ շատումն այդ ուղղութեամբ անկարելի կլինել: Սակայն հիմա դեռ յետ կարելի չէ, թեև ծնվալով դասակարգային պայքարը հեղափոխութեան զարգացման այս ուղիի կողմնակիցներին ավելի և ավելի հակահեղափոխութեան կողմնակիցներ ե դարձնելու:

Մյուս հեռանկարը— դա բուրժուական հեղափոխութեան արագ վախճանին հասցնելն է. այդ հեղափոխութիւնը դասակարգային, հետևաբար և վերջին հաշվով այլ տնտեսական ոելսերի վրա դնելն է և ապա շարժումը զարգացման սոցիալիստական ուղիով:

Վերջապես պետք է ասել, վոր Չինաստանի առաջին հեռանկարի մի ուրիշ վարիանտ ել կա, վոր ընկ. Ռադեկը չի ուզում ճանաչել: Չինաստանը մի յերկիր է, վոր տեխնիկապես ու տնտեսապես ավելի յետամնաց է, քան նախահեղափոխական Ռուսաստանը: Նրա համար հնա-

րավոր է նույն իսկ այնպիսի ուղի, յերբ բուրժուական հեղափոխութիւնը հասնում է իր վախճանին, յերբ վարին խավերի արմատական հեղափոխական ղիկտատուրան ակնհերև է, յերբ գերիշխանութիւնը պատկանում է պրոլետարիատին, սակայն ինքնուրույն սոցիալիստական զարգացման համար ուժը չի պատու: Միջազգային շրջապատի վորոշ պայմաններում, այսինքն՝ համաշխարհային տնտեսութեան ուրիշ ծայրերում յետ միջազգային հեղափոխութիւնը համընթաց բնույթ ստանա, յետ կապիտալիստական տերութիւնները շրջապատեն Ս. Ս. Հ. Միութիւնը, մի խոսքով համաշխարհային ուժերի աննպաստ դասավորութեան դեպքում— միանգամայն տեղին կլինի այն հարցը, թե ինչ կարելիութիւն կա այն վերասերման համար, վորի մասին այնքան «ավելորդ բան» է ասված Ս. Ս. Հ. Միութեան նկատմամբ: Ընկ. Ռադեկի հետ կատարվում է մի զարմանալի կերպարանափոխութիւն. Ս. Ս. Հ. Միութեան նկատմամբ նա ծայր աստիճան հոռի յետ արամադրված, մինչդեռ Չինաստանի նկատմամբ՝ նա գերլավատես է:

Ս. Ս. Հ. Միութեան նկատմամբ նա յերկու պերսպեկտիվ է հնարավոր համարում՝ «տերմիդորյան վերասերում» և սոցիալիզմի շինարարութիւն: Այստեղ «մեկ յերկրում» չի կարելի սոցիալիզմ կառուցանել, իսկ Չինաստանում — դա միանգամայն հնարավոր է: Նա հենց այդպես ել առում է պետք չէ Չինաստանի դեմ

նետել այդ միտքը՝ մի յերկրում սոցիալիզմ կառուցանելու մասին: Կարելի չէ սկզբում մտածել, վոր դա «բարեհոգի կատակ է»: Բայց այդ «կատակը» ընկ. Ռադեկի մտայնության մեջ խորունկ արմատ է գցել: Մի բան վոր Չինաստանում ավատականութուն չկա (առանձնապես ջերմ «ուղեկականները» «համաձայն» են միջանի «վոչ-թերունների» հետ, վոր Չինաստանում ավատականութունը իսպառ վոչնչացվել է քրիստոնեյութունից հարյուր տարի առաջ), ապա ել ինչ ասել, վոր Չինաստանն՝ ըստ իր անտեսական զարգացման տիպի՝ ավելի բարձր է, քան Ռուսաստանն է յեղել:

Յեթե Չինաստանում ավատականության հետքեր չկան, իսկ մեզանում յեղել են, յեթե մեզ սպառնում է «վանդեյանն»*, և գյուղացիության ու բանվորության միաբանության գործը հարցալիան նշանի տակ է (ինչպես պնդում է մեր ոպպոզիցիան), իսկ չինական բլոկը բանվորների և գյուղացիների միջև շատ ավելի ամուր է լինելու, ապա ուրեմն՝ այստեղից, — ինչպես յերկու անգամ յերկուն հավասար է չորսի, — բղխում է սոցիալիզմի շինարարության խնդրում հոռեստեութուն՝ մեր նկատմամբ և լավատեսութուն՝ Չինաստանի նկատմամբ:

Սակայն պարզ է, վոր փոքր ի շատե ճըշգրիտ անտեսական վերլուծումն ընկեր Ռադեկի

* Վանդեյա Ֆրանսիայի մի գավառի անունն է, վորտեղից Ֆրանսիական Մեծ Հեղափոխության միջոցին ծայր տվավ հակահեղափոխութունը:
Մանոթ Թարգմ.

այս խնդրում ունեցած տեսակետի դեմ է խոսում:

Հասկանալի բան է, վոր սոցիալիստական հարաբերությանց զարգացման հեռանկարը յենթադրում է յերկրի ներսում դասակարգերի հրակայական տեղափոխութուն և պետական իշխանության դասակարգային տեղափոխութուն, այսինքն՝ այլ հասարակական-դասակարգային հիմք պետական իսկ իշխանության համար: Ինքնին հասկանալի չէ, վոր այդ հեռանկարների զարգացումը յենթադրում է Չինաստանի կատարյալ միութուն կազմելը, ազդային-ազատագրական պայքարի կատարյալ վախճանին հանգելը, հողային խնդրի ամենաարմատական լուծումը, իմպերիալիստների կատարյալ պարտութունը: Այդ հիմքի վրա, վորտեղ մեկ ողակը կապվում է մյուսի հետ, շարժումը հասարակական-դասակարգային զանազան ուժերի լամբակցութունների տեղափոխության միջոցով անցնելու յե հեղափոխության սոցիալիստական ռեյսերի վրա:

Ընկ. Ռադեկի հետ կարելի չէ վորոշ չափով համաձայնելը չին հեղափոխության զարգացման ետապիերի (անցնելիք ճամբամասերի) խնդրում: Այնու հանգերձ պետք է նկատել, վոր ընկ. Ռադեկի այդ խնդրում արծարծած տեսալենկ. Ռադեկի սյդ խնդրում ձևակերպված է կետը բավական հստակորեն ձևակերպված է յեղել կոմիտոերնի Գործկոմի լայնանիստ պետումի միջոցին՝ չին խնդրի մասնաժողովում: Չին հեղափոխության ետապների մասին արտա-

սանած մեր ճառում մենք նախատեսել էյինք, մտտավորապես, չին հեղափոխութեան յերեք փուլերը՝ յերկուսը—անցած և անցումն յերկրորդիցը դեպի յերրորդ փուլը: Սկզբում պայքարի ձեռնարկողները՝ բուրժուազիան, ուսանողութիւնը և մտավորականութիւնն էյին, որոնք հենարան էյին վորոնում բանվոր դասակարգի և գյուղացիութեան մեջ: Յեվ պետք է ասել՝ այդ միջոցին վնչ բանվորները, վնչ գյուղացիները իմպերիալիզմի դեմ շարժման մեջ տակավին բավականաչափ ևսոյր դեր չէյին խաղում: Յերկրորդ փուլը բնորոշվում է բանվոր դասակարգի գործոն յելույթներով, գյուղացիական շարժման սկզբնավորութեամբ և, դրանց հետեւանքով, ծանրութեան կենտրոնի տեղափոխութիւնը մանր-բուրժուազիայի մեջ: Այսպիսով մենք այստեղ ունենք բանվոր դասակարգի աճող ճնշումը դեռ ևս ազատամիտ բուրժուազիայի գերիշխանութեան պահին, գերիշխանութեան, վորի վրա արդեն աչք է դնում պրոլետարիատը: Այստեղ, ուժերի բլոկում, ուղղված ընդդեմ իմպերիալիզմի, բուրժուազիան տակավին մասնակցում է, թեև արդեն սկսում է վախենալ զանգվածային շարժման աճումից: Յեվ վերջապես այն ետապը (ճամփամասը), վոր մենք հիմա ապրում ենք, և վորը չոր ու ցամաք գծագրութեամբ ու կոպիտ կերպով կարելի չէ անվանել անցումն դասակարգային բլոկից ազգային - հեղափոխական ճակատի՝ բուրժուազիայի, բանվոր դասակարգի և գյուղացիութեան

միջև—մի այլ բլոկի, վորից դուրս է դալիս խոշոր բուրժուազիան, մասամբ անգնմանը ու միջին բուրժուազիան:

Դասակարգային պայքարի ծավալումը ներկայումս ցուցադրում է չին հեղափոխութեան զարգացման մեջ այդ պատմական ուղեմասը, հասարակական ուժերի այն պիտի դասավորման գոյութիւնը, յերբ բուրժուազիան սկսում է յետքաշվել հեղափոխութեան իսպառ չի դարձել, հակահեղափոխական:

Այստեղ պետք է ընդգծեմ մի միտք, վոր եապես կարևոր է: Չինաստանը—բազմաթիւ հասարակական-տնտեսական կացութիւնների և դասակարգի մեջ՝ բազմաթիւ տարբեր յերանգների յերկիւր է: Դա բնավ ընդհանուր տնտեսական հասունութեան վկայական չէ: Ընդհակառակը, դա Չինաստանի և չին տնտեսութեան, տեխնիկական և տնտեսական մեծ հետամնացութեան նշան է: Այստեղ կիսաբանվորների, արհեստավորների, մանր առևտրականների շատ շերտեր կան: Բուրժուազիայի մեջ զանազան յերանգներ կան՝ ոտտար կապիտալի հետ ունեցած կապերի տարբեր տիպերով: Ուստի և միանգամայն բնական է, վոր բուրժուազիայի քաշվելը կատարվում է յերբեմն տարրի-նակ ծուռ ու մուռ ուղիներով: Չի կարելի բանն այնպես պատկերել, իբրև թէ դասա-

կարգային հողակողկողներն այստեղ ստուգորեն սահմանազօված են և ամբողջովին ու միանգամից պոկվում են. ազգային-հեղափոխական ճակատից: Այդ խայտաբղետութունն ավելի ցայտուն է արտահայտվում քաղաքային մասն բուրժուազիայի մեջ: Այստեղ կան՝ քաղաքային մտավորականություն, արհեստավորներ, մանր քաղաքացիներ, ինքնուրույն առևտրականներ և նրանք, վոր շատ վատ ապրելով, յերբեմն վարձու բանվոր ունեն, վորոնց ուղղակի թե անուղղակի կերպով շահագործում են: Այս շերտը աճող հեղափոխությանը մատակարարում է զանազան չափի և մեծության զանգվածներ: Մի կողմից մենք տեսնում ենք մանր բուրժուազիայի շատ արմատական հատված, իսկ մյուս կողմից՝ մանր բուրժուազիայի մի հատված, վոր դառնում է չափազանց հետադիմական, վորովհետև նա ինքն էլ «բանվոր» դասակարգի անիրագործելի պահանջները՝ սպառնալիքի տակ է: Մանր բուրժուազիայի այդպիսի հատվածները ձայնակցում են խոշոր խոզեյիններին և նրանց հետ միասին գոռում այսպես կոչված «բանվորական ահաբեկման» մասին:

Բուրժուազիայի և նրա զանազան մասերի անջատումը պատմական պրոցեսս է: Մենք պարզ տեսնում ենք այդ անջատումը, կարելի յե Ֆիզիկապես շոշափել այն ձեռներով: Ազգային-հեղափոխական ճակատի ներսում դասակարգային պայքարի բնագավառում, այդ յերեվոյթը գտել է իր արտահայտությունը մի

չարք պատմական կարևորություն ունեցող դեպքերի մեջ: Սակայն այստեղ պետք է շեշտել, վոր այդ պրոցեսսում անջատումը հեղափոխությունից և հակահեղափոխական բանակն անցնելը՝ անհավասարաչափ են: Տաքտիկական խնդիրները լուծման միջոցին քանակի այդ զանազանությունը, զանազան բուրժուական խմբակցությունների ան-միորինակությունը և նրանց՝ հեղափոխությունից կտրվելու ան-միաժամանակությունը, անտարակույս, անհրաժեշտ է ստրատեգիական և տաքտիկական տեսակետից հաշվի առնել:

Ինչպես մենք արդեն ասել ենք դեռ ևս կոմինտերնի Գործկոմի Vll պլենումի մեջ, չին հեղափոխությունն այժմ հեղափոխության զարգացման երկրորդ ետապից յերրորդին անցնելու փուլի մեջ է: Բանվոր դասակարգն աճող չափով պայքարում է ընդդեմ բուրժուազիայի՝ ազգային-հեղափոխական շարժման մեջ գերիշխանություն ձեռք բերելու համար և ավելի ու ավելի յե շեշտում իր դերը, վորպես ղեկավարի, վոր վորոշում է հեղափոխական շարժման ուժերը, դրանով իսկ նախագծելով որոշ (սոցիալիստական) ուղի չինական բովանդակ հեղափոխության առջև:

Անցողակի կանգ առնենք հետևյալ հարցի վրա: Հնարավոր է առհասարակ չին հեղափոխության համար զարգացման սոցիալիստական ուղին. հնարավոր է դա նախ և առաջ տնտեսական տեսակետով:

Հնարավոր ե արդյոք չին հեղափոխութեան համար զարգացման սոցիալիստական ուղին նախ և առաջ տնտեսական տեսակետից. այդ հարցին պետք ե պատասխանել հետևյալ կերպով: Չինաստանում գոյութիւն ունեն տնտեսական հրամանատարական բարձունքներ, վորոնք, գլխավորապես, ոտար կապիտալի ձեռքին են: Հետևողական, մինչև վախճանը հասցրած ազատագրական պայքարը, վոր յենթադրում ե իմպերիալիստների վոնդումը Չինաստանից, դրանով իսկ հնարավոր ե դարձնում խոշոր ձեռնարկութիւնների բռնագրավումը, յեթե լինի անհրաժեշտ հավասարակշռում, զանազան կապիտալիստական տերութեանց միջև յեղած հակամարտութիւններից ոգովելու համար կարևոր խաղ և այլն: Ծանր արդյունագործութիւնը, մանածային արդյունագործութիւնը, յերկաթուղիները, հանքերը, նշանակալից չափով բանկային սիստեմը և այլն, ավելացնենք դրաց վրա հողը, — կարող են ազգայնացվել. մի բան, վոր յենթադրում ե իշխանութեան վորոշ հասարակական-դասակարգային կերտվածք: Այս պրոցեսսի քաղաքական նախադրյալները կարտահայտվեն՝ պրոլետարիատի և գյուղացիութեան ղեկատարայի մեջ, վոր այնուհետև կվերածվի բանվորների և գյուղացիների դաշնակցութեան պրոլետարիատի՝ ղեկավարութեամբ: Այնուամենայնիվ Չինաստանի ընդհանուր տնտեսական կառուցվածքն այն տեսակ ե, վոր չափազանց մեծ ե վտանգը միջազգային ուժերի ոգնութեան բացակայութեան դեպքում,

վոր զարգացումը կծու ոտցիալիստական ուղիից: Սակայն այստեղ ոգնութիւն կհասնեն մի շարք հանգամանքներ: Առաջինը՝ Խորհրդային Միութեան գոյութիւնը: Յերկրորդը՝ կապիտալիստական տերութեանց հնարավոր ոգտագործումը և տրանզիտը Խորհրդային Միութեան հողով Յեւրոպայից: Յերրորդը՝ զանազան բաշխումները կապիտալիստական տերութիւնների միջև: Զորրորդը՝ միջազգային պրոլետարիատի ոգնութիւնը, վոր չին հեղափոխութեան կողմն ե պահում: Հինգերորդը՝ գաղութային շարժման աճումը և այլն: Այս ամենը կարող ե ապահովել Չինաստանի զարգացման համար սոցիալիստական ուղին: Ինքնին հասկանալի յե, վոր այդ դրութիւնները պատասխան չեն տալիս առարկայական-տաքտիկական հարցերին: Նրանք միայն մի հարցի յեն պատասխան տալիս. նրանք ասում են, թե բանվոր դասակարգի կուսակցութեան որվա խնդիրը, չին կոմունիստական կուսակցութեան խնդիրը, ամեն մի կոմունիստական կուսակցութեան խնդիրը և կոմունիստական բովանդակ ինտերնացիոնալի խնդիրը՝ չին հեղափոխութեան զարգացման սոցիալիստական ուղիի համար պայքար մղելու մեջ ե:

5. ԱԶԳԱՅԻՆ-ՎԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՔԱԿԱՏԸ ՅԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՖԱՐԸ

Հիմա պիտի ավելի առարկայական կերպով դնենք չին հեղափոխության ընթացիկ ետապի դասակարգային պայքարին վերաբերող հարցը: Մենք այստեղ թողնում ենք գրեթե բոլոր մանրամասները և անգամ համեմատաբար կարևոր գծերը, վոր բնորոշում են կացությունը, որինակ՝ ոտար իմպերիալիստական բուրժուազիայի ուժերի մեջ զանազան որիյենտացիաների և զանազան յերանգների խնդիրը՝ չին հեղափոխության նկատմամբ: Այստեղ կարևոր է շեշտել այն հանգամանքը, վոր Մուկդենի խմբի հյուսիսային միլիտարիստները ուժերի միաբանությունը Չան-Չո-Լինի գլխավորությամբ բոլոր յերանգների իմպերիալիստներին հետ, վոր զինված պայքար են մղում չին ժողովրդի դեմ — ունի մի վորոշակի քաղաքական առանցք: Այդ քաղաքական առանցքն այն է, վոր մեկուսացվի Գոմինդանի ձախ թևը, մեկուսացվեն առաջին հերթին կոմունիստները՝ իմպերիալիզմի ուժերի, Մուկդենի խմբի ուժերի, այսինքն՝ Չան-Չո-Լինի ուժերի և աջակողմյան գոմինդանականների միջև յեղած բլոկի միջոցով Չան-Կայ-Շիի գլխավոր

րուժյամբ: (Յերբ վոր մենք ասում ենք «ձախակողմյան գոմինդանականներ», չպիտի անուշադիր թողնենք մի շարք միջին տեղ գրավող խմբակցությունների գոյությունը, վորոնք մըտնում են այսպես կոչված «ձախ Գոմինդանի» մեջ):

Իմպերիալիստական մամուլի գրեթե բոլոր որգանները միանգամայն բաց կերպով անջ գիծն են առաջ տանում, գործն այսպես ձեվակերպելով՝ դուրս արեք «ուսս խորհրդատուներին», դուրս արեք կոմունիստներին, խեղդեցեք կոմունիստների հետ միասին նաև արմատական Գոմինդանականներին, խեղդեցեք բանվորական շարժումը, սանձահարեցեք գյուղացիներին — այն ժամանակ գործը կշտկվի, և կարելի կլինի համաձայնության գալ: Չանազան ժամանակ և զանազան ձևերով Չան-Չո-Լինը քանիցս հայտարարել է, թե իմպերիալիստների դեմ պայքարելու խնդրում իր և գոմինդանականների միջև «եական» տարաձայնություններ չկան, միայն թե նա (Չան-Չո-Լինը) ավելի չափավոր դիրք է բռնում: Հո չի կարելի միանգամից վերացնել անհավասար պայմանագրերը: Սակայն դրանք սկզբունքային տարաձայնություններ չեն: Այն, վոր անջատում է նրան հարավայիններից — դա պայքարն է «կարմիր վտանգի դեմ», պայքարը Ս.Ս.Հ.Մ. ազդեցության դեմ, վորը, իբրև թե, շարունակում է հին ցարական քաղաքականությունը՝ միջամտելով չինական գործերին: Կա մի բնորոշ հանգամանք զանազան դասակարգային

ուժերի և զանազան դասակարգային խմբակցությանց ուժերի խաղի մեջ: Մուկղենի խմբակցությունը և ոտար խմբերիալիզմի զանազան խմբակցություններն իրենց կողմն են քաշում աջակողմյան գոմիին դանականներին և փորձում են—վոչ առանց աջողության—կամաց կամաց նրանց իրենց գործակալները, իրենց մարդիկը դարձնել: Մուկղենի խմբի ամենաձախակողմյան դեմքերը (որինակ՝ զորավար Յան-Յուլ-Տինը, վորին համարում են Մուկղենի խմբակցության «ուղեղը», և վորը «ձախակողմյանի» համբավ ունի), առնաձնապես սուր կերպով են մարմնացնում այդ տենդենցը—բլոկ ստեղծելու խմբերիալիստների և աջակողմյան գոմիինդանականների հետ՝ ավելի ու ավելի դաժան պայքար մղելու նպատակով ընդդեմ ձախակողմյան Գոմիինդանի և, առաջին հերթին, ընդդեմ կոմմունիստական կուսակցության: Պեսքե ասել, վոր բովանդակ միջազգային բուրժուազիան, Մուկղենի խմբակցության բոլոր որդանները, աջակողմյան գոմիինդանականները, ձախ մուկղենցիները, զանազան յերանգի բուրժուական մամուլը—սխտեմարար խփում են այդ կետին: Իս նրանց հիմնական քաղաքական գիծն է: Հասկանալի բան է, վոր «կարմիրների» «թեր» թե «դեմ» ձևակերպությունը—յերկրի տնտեսության մեջ, նրա հասարակական-դասակարգային շերտավորման մեջ, ծավալվող դասակարգային պայքարում—խոր արմատ ունի: Ես սերտորեն կապված ե արա-

տամիտ բուրժուազիայի պարզորեն արտահայտված աջացման պրոցեսսի հետ, այդ բուրժուազիայի աստիճանական անջատման հետ՝ ընդհանուր ազգային-հեղափոխական բլոկից, նրա հակահեղափոխության բանակին հարելու պրոցեսսի հետ. մի բան, վոր, հասկանալի յե, կապված է մի շարք բաղխումների, կոնֆլիկտների, դավաճանությունների, հեղաշրջումների հետ և այլն, և այլն, վորոնց մասին խոսքը ստորև ե լինելու: Անջատման այդ պրոցեսսը, իր հերթին, կապված է մի այլ գորավոր պրոցեսսի հետ, վոր տեղի ունի չին հասարակության ծոցում, բան վոր ներքի և գյուղացիներին մասսայական շարժման գորավոր աճեցման հետ, յերբ վոր քաղաքական կյանքի մեջ առաջին անգամը աշխատավորների միլիոնները հազորդակից են լինում քաղաքական կյանքին, հանդես են գալիս ավելի ու ավելի վճռականորեն իրենց դասակարգային պահանջներով, վոր որ ավուր, ամիս առ ամիս անխուսելից ազգային-հեղափոխական նախապես միասնական ճակատից այն մասը, վոր արտահայտում է շահերը խմբակցությունների, վորոնք բանվորի և գյուղացու նկատմամբ հառարակական-դասակարգային պլյուսներ են: Անգամ բուրժուական դիտողները, ասենք՝ պաշտոնական անգլիական առևտրական գեկույցի հեղինակները,* վեր են

* «Բացի այն, վոր 1925 թ. առաջացրեց ամենախոշոր գոր-

հանում այն զրույթյունը, թե անցած տարին բանվորական շարժման բնագավառում կազմակերպչական մեծ ստեղծագործություն տարի յե յեղել: Յես կարող եյի մեջ բերել մի շարք վկայություններ, վորոնցում բանվորական շարժման յերդվյալ հակառակորդները, վորոնք ամենորյա մամուլի մեջ շարունակ խոսում են «ամբոխի բռնությունները», «սանձարձակ ամբոխի» մասին, վոր ամեն մի «մշակույթի», ամեն «քաղաքակրթության» սպառնալիք է—այդ իսկ մարդիկ, իրենց ավելի յուրջ հրատարակությանց մեջ ուղղակի հայտարարում են, թե վերջին տարին Չինաստանում ծնվեց զորավոր շարժում, վոր ավելի ու ավելի յե կազմակերպվում ըստ արևմտա-յեվրոպական նմուշի (վոչ թե ոպպորտունիզմի գաղափարախոսության տեսակետով, այլ կազմակերպչական ձևերի, կարգապահության, միաբանության տեսակետից և այլն):

Հսկայական հորձանքով Չինաստանի վրայից անցած տնտեսական գործադուլները չափազանց արագ վառ-քաղաքական բնույթ ստացան: Այդ գործադուլներն ամրացրին բան-

ծաղուլը, վոր միայն հայտնի յե չին արդյունագործության պատմության մեջ, այդ տարին կլինի նաև «կազմակերպված աշխատանքի», վերելքի տարին Չինաստանում այն իմաստով, ինչպես այդ տերմինը հասկանում են արևմտա-յեվրոպական յերկրներում. Այդ վերելքն ուղղակի հետևանք է գործադուլների, վոր տեղի ունեցան Շանհայի ճապոնական գործարաններում 1925 թ. - Report on the commercial industrial and economic situation in China 10 30 June 1926», By A. H. George, p. 13.

վոր դասակարգի արհեստակցական կազմակերպությունները: Բանվոր դասակարգը մեծ տոկոսով չափազանց գործադուլային պայքար վարեց, ամբողջ վոգևորություն պայքար մտավ և յերիտասարդ բանվոր դասակարգին վայել հերոսություն դրսևորեց: Բանվոր գասակարգի շարժման ակտիվության (ներգործության) բարձրացումը ակտիվության (ներգործության) հարաբերականորեն կանկուսակցության հարաբերականորեն ծայր աստիճան աճման մեջ: Կոմկուսը մի քանի ժամանակ առաջ թվով չնչին էր, իսկ հիմա յերկրի զարգացման ամենախոշոր քաղաքական ֆակտորներից մեկն է: Կոմկուսի նշանակությունը, վոր իր շարքերում 30,000 անդամ է հաշվում, նրա ավելի մեծ է, քան այդ կարելի յե կարծել անշատ ավելի մեծ է, քան այդ կարելի յե կարծել անդամների այդ թվին նայելով: Կոմկուսը բացառիկ ամեծ ազդեցություն ունի արհեստակցական միություններին մեջ: Նա մեծ ազդեցություն ունի գյուղացիության մեջ: Վերջապես նրա քաղաքական կրճիոր բազմապատկվում է այն ազդեցության հետ, վոր գալիս է Կոմիստերից, մեր կոմկուսի կողմից: Վերջին հանգամանքը բացատրվում է նրամիով, վոր ազգային-հեղափոխական ճակատի յունով, վոր ազգային-հեղափոխական մասնակից, իր բոլոր դասավորութայունների և հաշիվների մեջ, Չինաստանի կոմկուսի մեջքին միշտ Կոմիստերն է կանգնած տեսնում և հարկադրված է հաշվի առնել այն ազդեցությունը, վոր Ս.Ս.Հ.Միությունն ունի համաշխարհային անցուղարձի զարգացման վրա

ընդհանրապես և չինականի վրա՝ առաջին հերթին:

Չին բանվոր շարժման մեջ արդեն պայ-
ծառորեն դուրս են յեկել նրա կենտրոնա-
կան հանգուցային կետերը: Արժե հաշ-
վի առնել այնպիսի մի կետ, ինչպես Շան-
հայն է, վոր ավելի ու ավելի յե չինական
«բանվորական Պետրոգրադը» դառնում: Մենք
տեսանք, թե ինչպես չին բանվոր դասակարգի
պայքարը, համեմատաբար կարճ ժամանակամի-
ջոցում, տարերային անկազմակերպ, տարերային
անտեսական գործադուլներից հասավ բարձրա-
գույն ձևի, քաղաքական բնույթ կրող դասակար-
գային գիտակցական պայքարի: Շանհայի անցու-
դարձը, լոգունգները, վոր հանդես են բերել
բանվորները, դրոշակների սիմվոլները (խորհրդա-
նշանները), վորոնցով Շանհայի բանվորները կռվի-
յեն գնում, — այդ ամենը ցույց է տալիս բան-
վորական շարժման անորինակ թափը և այդ շարժ-
ման խիստ արագ տեմպը (ընթացքը), վոր
համեմատաբար կարճ ժամանակամիջոցում անց-
նելով բոլոր աստիճանները, դասակարգային
ինքնագիտակցության ամենապարզորակ և տար-
րական ձևերից հասել է շատ բարձր ձևերի:
Պայքարի ամենապարզ մեթոդներից՝ մինչև ամե-
նաբարձրերը: Վորովհետև բանվոր դասակարգի
պայքարի գերագույն մեթոդը ապստամբությունն
է և շարժման դասակարգային գիտակցության
ամենաբարձր աստիճանը՝ բանվոր դասակար-
գի գեղի շխանության գաղափարը:

Չին բանվոր դասակարգը, չնայած իր ան-
ցած ահադին ճանապարհին, այնուամենայնիվ
այսօր չի հանդիսանում մի ըստ ամենայնի
միատարր ամբողջություն: Նրա ծոցում
կան մի շարք շերտեր՝ ըստ կուլտուրական
և քաղաքական մակարդակի շատ տարբեր:
Նրա ծոցում կան մի շարք հակամարտություններ,
և այդ հողի վրա պայքարը զանազան արհեստակ-
ցական միությունների միջև (կանտոնի բաղ-
խումները, վոր հրահրում է բուրժուազիան)
հաճախ քիչ է մնում զինված բաղխումների հասնի:
Նրա ծոցում գոյություն ունեն, ճիշտ է, վոչ ազ-
դեցիկ դեղին արհեստակցական միություն-
ները, վորոնց բուրժուազիան ոգտագործում է
յուրաքանչյուր կոնֆլիկտի, յուրաքանչյուր գոր-
ծագուլի ժամանակ: Մի խոսքով, ինչպես և ամեն
յերկրում, այնպես ել Չինաստանում դեռ ևս շատ
կան զանազան շփումներ և խոցեր բանվորա-
կան շարժման իսկ ներսում: Բայց դրա հետ
միասին, անտարակույս, այդ շարժման ընդհա-
նուր հաշվեհարդարը դեպի գորավոր վերելքը և
ծաղկումն է տանում:

Բանվորական շարժման վերելքի կողքին,
շատ նշանակալից Ֆակտոր է, առաջնակարգ
պատմական արժեք ունեցող Ֆակտոր — գյուղա-
ցիական շարժումը, վորը նմանապես իր
զարգացման տարերային ձևերից ավելի ու ավելի
կազմակերպված ձևերի յե անցնում: Այդ հաստա-
տում է վոչ միայն «Կարմիր Տեգերի» աճումը,
այլև այնպիսի կազմակերպությունների զարգա-

ցումը, ինչպես «գյուղացիական միությունները», ինչպես գանազան գավառների այդ «գյուղացիական միությունները» ինչպես այդ «գյուղացիական միությունները» համագումարն երբ, ինչպես այդ կազմակերպությունների սխառմամտիկ աշխատանքը՝ հողային ծրագիրը մշակելու համար: Նկատենք, վոր այդ ծրագիրները կապվում և միացվում են ընդհանուր-ազգային հեղափոխական պահանջների հետ: Նույնը հաստատում է գյուղացիական զանգվածային յեղուկների աճումը, վոր կապված է հենց գյուղի ներքին պայքարի սրվելու հետ: Գյուղատնտեսություն այն վիճակը, վորի մասին մենք խոսել ենք վերը, — գյուղացիներից բարձր տոկոս առնող վաշխառուների բռնությունները, ծանր տուրքերը, կապալավարձի վճարումները, ամեն տեսակ միանվագ տուրքերը, սարսափելի քայքայումն՝ տեղական քաղաքացիական կռվի հետևանքով, մի քանի տարվա հարկերի նախապես գանձումը և այլն, — այս ամենը հողային գյուղացիական շարժման հիմքն է կազմում: Այդ շարժումն էլ, բանվորական շարժման պես, հսկայական թափ ունի: Շարժման աճումի հետևանքով բանվորներն ու գյուղացիները բաղկվում են իրենց դասակարգային հակառակորդների հետ, նույն իսկ նրանցից այնպիսիների հետ, վորոնք հեղափոխություն առաջին շրջանում միասնական ազգային-հեղափոխական ճակատի մեջ էյին ընթանում: Բանվորները, միանգամայն բնական է, վոչ միայն իմպերիալիստների արտաքսման համար են պայ-

քարում, այլև առաջ են մղում իրենց տնտեսական պահանջները՝ բանվորական որի կրճատման, աշխատավարձի հավելման, բանվոր դասակարգի արհեստակցական միությունների ճանաչման, ընդհանրապես հասարակական կյանքում, պետություն մեջ, գործարանում բանվոր դասակարգի իրավական բարելավման գծով և այլն: Ինքնին հասվական բարելավման հեղափոխական շարժումը, այնքան ավելի սուր և անդրդվելի կան շարժումը, այնքան ավելի սուր և անդրդվելի կերպով են առաջ մղվում այս պահանջները: Դյուրին է ըմբռնել, վոր նման գորավոր հեղափոխություն մեջ, յուրաքանչյուր դասակարգ հակված է իր տնտեսական և քաղաքական պահանջների առավելագույնը առաջ մղելու: Բնականաբար գործը առանց այսպես կոչված «եքսցեսսների» չի լինում: Այս գորավոր շարժման իրական պատկերը շատ խայտաբղետ է: Մի տեղ դուք տեսնում եք թե ինչպես բուրժուաներին դուրս արին գործաթե ինչպես բռնազրավեցին ու բաժանեցին իրար մեջ նրա ապրանքները, յերրորդում՝ բռնազրավեցին՝ դրամարկղը և այլն: Դա միանգամայն անխուսափելի է, դա այն լայնուզման արտահայտությունն է, վոր հիմա յերկման է բերում բանվորական շարժումը:

Բանվորական շարժման ճնշման ներքո՝ բուրժուաների ավելի ու ավելի յե յետ մղվում, ավելի ու ավելի յե անջատվում միասնական ազգային-հեղափոխական ճակատից: Սկզբում Չինաստանում մեծ վարկ էյին վայելում այնպիսի տեսություններ ու հայտարարություններ (այգորինակ

տեսություններն ու հայտարարությունները գոյություն ունեյին և ունեն ներկայումս ել) թե՛ չին կապիտալիստները կապիտալիստներ չեն և թե՛ բանվորը վաճառականի առաջին բարեկամն է, իսկ վաճառականը՝ բանվորի առաջին բարեկամը: Յե՛վ այդ ասվել է, այսպես ասած, «առ հավետ», այսինքն, այլ խոսքերով՝ ընդհանրապես ժխտվում է սնտիմիլիտարիստական ճակատիներստում դասակարգային բաժանումների գոյությունը Չինաստանում: Յեթե այդորինակ տեսություններն ու հայտարարությունները առաջ վորոշ վարկ վայելում եյին, հիմա արդեն այդ բանը չի կարելի հաստատել: Դասակարգային շերտավորումն այնքան հեռու յե գնացել, վոր նա վանում է նմանորինակ տեղական կառուցումներ, վոր յուրաքանչյուր որ ավելի ու ավելի յեն մերկացվում:

Գյուղացիական զանգվածների գրոհը նմանապես ճնշումն է գործ դնում վո՛չ մե՛ն ակա վատատերերի վրա: Ավատական ինստիտուտները կապված են վաճառական կապիտալի հետ, վաշխառուական կապիտալը, բանկային սիստեմի միջոցով, կապված է առևտրական և արդունագործական կապիտալի հետ և այլն: Գյուղացիական լայն շարժման պատմաբեմ յեղնելը, գյուղացիների՝ կապալավարձի և տուրքերի նվազեցման պահանջը, «Չենտրինների» դեմ ծավալվող պայքարը, տենդենցը բունագրավելու վոչ միայն միլիտարիստների, ավատատերերի և այլոց գույքն ու կալվածները, այլև բոլոր խոշոր ու միջակ կալվածատերերի, վորոնք մասամբ զբավում են

միջին տեղը կալվածատերերի և գյուղական ցեց խավերի միջև, հին վարչական իսկ ապարատի վերացման և փոխարենը տեստեղծելու փափագը, գյուղացիական կոստեղծելու փափագը, գյուղացիական միտեների և միությունների ձևով, միտեների և միությունների սեփական գյուղավորոնք հենված լինեյին սեփական գյուղացիական ղի նվաճ խմբերի վրա և այլն, — այս ամենը չի կարող չազդել գյուղա- և այլն, — այս ամենը չի կարող չազդել գյուղա- տնտեսական բուրժուազիայի բարձր խավի վրա, «Չենտրինների» և նրանց հետ կապված շերտերի վրա, վորոնք ավելի ու ավելի գորավոր կերպով մտավորապես 75- մուներ սեփականատերերի մոտավորապես 80 տոկոսը շարժման մեջ է, յերբ վոր այդ գյուղացիական ովկիանոսն ալեկոծվում է, ապա գյուղի ներհակ մասը՝ ավատական, կալվածատիրական, կուլակային, վաշխառուական, հին-պաշտոնեության մասն սկսում է ավելի ու ավելի վճռականորեն զինվել հեղափոխության դեմ: Այդ տեղափոխու- թյունը չի կարող տեղահան չանել քաղաքից մի շարք խմբակցություններին, մանավանդ վոր հողատերերը, վորոնք իրենց հողը կապալով են տալիս, յերբեմն նշանակալից թվով քաղաքում են ապրում և վոչ գյուղում, իսկ հողատերերը բան- կաների միջոցով կապված են քաղաքի կապի- տալի հետ:

Այսպիսով ազգային-հեղափոխական շարժումն ինքնին, բանվորագոյուղացիական զանգվածներին երգրավումն ազգային-հեղափոխական հեղեղի մեջ — ազգային-հեղափոխական ճակատի ներսում անխուսափելիորեն առաջ բերին խմբակցությունները մեծ փոփոխություն: Այդ հեռանկարը չի կարելի ծածկել: Դրա մասին պետք է խոսել: Լայնանիստ պլենումի չին մասնաժողովի նիստում մենք ասում եյինք. «Հիմա մենք այնպիսի դրության մեջ ենք, վոր պիտի ընտրություն անենք, թե հեղափոխական պրոցեսում սլմն ենք ուղղում դաշնակից ունենալ՝ գոյուղացիներին, թե՛ խոշոր արդյունագործական բուրժուազիային: Ընկերներից մի քանիսը... այսպես եյին դատում. բուրժուազիան հեղափոխական ույժ է, մենք պիտի նրան մեր կողմը քաշենք: Դա ճիշտ է, բայց վորոշ չափով, մինչև այն կետը, յերբ յերկրնատրանք է առաջ գալիս՝ կամ գոյուղացիներին, կամ բուրժուազիային հետ»:

Այդ բանն ասված է յեղել պարզորոշ կերպով նաև Կոմիստերնի Գործկոմի լայնանիստ պլենումի ընդունած բանաձևում: Այդ բանաձևը նիշում է՝ վոր «չին հեղափոխության առաջմղիչ ույժը, ներկա շրջանում, պրոլետարիատի, գյուղացիության և մանր-բուրժուազիայի հեղափոխական բլոկն է, և այդ բլոկի մեջ գերիշխող

Ֆակտորը պրոլետարիատն է»: Այդ բանաձևն ասում է, վոր «հողային հարցին խիզախ մերձենալու բացակայությունը վտանգավոր է հեղափոխության համար»: Վերջապես բանաձևը դասակարգերի փոխհարաբերության խնդիրն այսպես է ձևակերպում. «Ընթացիկ դրության յուրորինակ առանձնահատկությունը նրա անցողական բնույթն է, յերբ պրոլետարիատը պիտի ընտրություն կատարի՝ կամ բուրժուազիայի նշանակալից խավերի բլոկի հեռանկարն ընդունի, կամ գյուղացիության հետ իր դաշնակցության հետագա ամրապնդման հեռանկարը: Յեթե պրոլետարիատը արմատական հողային ծրագիր չառաջադրի, նա չի կարողանա գյուղացիությունը քաշել հեղափոխական պայքարի մեջ և ազգային-ազատագրական շարժման մեջ կկորցնի իր գերիշխանությունը»: («Կ. Ի. Գ. Կ. VII պլենումի թեզիսներն ու բանաձևերը», Պետհրատ, էջ 54): Պետք է ասել, վոր յեթե դասակարգային պայքարի հետևանքով գյուղացիության և բանվոր դասակարգի ներսում առաջ են գալիս զորավոր կազմակերպություններ, ապա այդ պայքարը կատարի ինքնակազմակերպություն է առաջացնում ինչպես հեղափոխության հին հակառակորդների, այնպես և անցնում հակահեղափոխական բանակը: Ընդ սմին հաճախ նկատվում է հասարակական միմիկրիի յերևույթը՝ հասարակական նմանողություն և զիմակավորումն: Որինակ՝ հիմա ժողովրդականություն են վայե-

լում բանվորական արհեստակցական միությունները: Ուստի գործարանատերերն էլ իրենց կազմակերպությունները կոչում են «արհեստակցական միություններ»: Յերբեմն հարց է հարուցվում՝ ի՞նչ արհեստակցական միություն՝ բանվորներին, թե՞ գործարանատերերին: Յերբեմն այդ հոգի վրա ծիծաղելի գեպքեր են պատահում: Որինակ՝ հոգևորականությունը կանտոնում ունի իր արհեստակցական միությունը և առաջ է մղում ազոթքի ու արարողությունների համար վարձի բարձրացման պահանջ: «Արհեստակցական շարժման» յուրորինակ ձև:

Փյունուղում գոյություն ունեն մի շարք գանազան, արագ աճող կազմակերպություններ, վորոնք կոչվում են «հոգատերերի միություններ» և այլն, և վորոնք քաղաքի խոզեյինների «արհեստակցական միությունների» և առաջին հերթին արդյունագործական ու առևտրական բուրժուազիայի կազմակերպությունների հետ կազմակերպված ույժ են ներկայացնում: Այդ ույժը ճնշումն է գործ գնում կառավարության վրա, վորի մեջը իր «մարդիկն» ունի, պահանջներ է առաջադրում և հաճախ հաջողություն ունենում: Նրանք գյուղերում հենվում են յուրորինակ ժանդարմների վրա, վորոնք «Չենտրինների» ձեռքումն են գանվում և կոչվում են «մինտուանի»: «Մինտուանի» — ուղղամ-վոստիկանական ույժ է, վոր հաճախ գյուղացիական խմբերի, գյուղացիական միությունների գեմ իսկական ճակատամարտ է ունենում, իսկ քաղաքներում կարմիր գվարդիայի

սաղմը ներկայացնող բանվորական զինված խմբերի գեմ է բախվում:

Մենք կարող ենք նկատել մի շարք յերեվույթներ, վոր նման են մեղանում տեղի ունեցածներին: Որինակ՝ բուրժուազիայի լոգունգներից մեկն է՝ պայքար ընդդեմ բանվորների «ծայրահեղ» պահանջներին: Դա ուղղակի գասական լոգունգ է: Բուրժուազիայի գաղափարական պրոպագանդային պայքարի ամենագործածական և գլխավոր մեթոդներից մեկն է գա: Մրանց թվին են պատկանում նաև խոսակցությունները այն մասին, թե՞ գործադուլները քայքայում են անտեսությունը, թե՞ անընդհատ աճող գուծադուլների և այն քառսի շնորհիվ, վոր հիմա իշխում է անտեսական կյանքում, «չի կարելի գործ վարել» և այլն, և այլն: Մրանց թվին է պատկանում և՛ կատաղի վոռնոցը այսպես կոչված «բանվորական ահաբեկության» մասին: Մանր բուրժուազիայի ահաբեկներ հիշատակել ենք, վոր նա մասին մենք արդեն հիշատակել ենք, վոր նա միատարր չէ, վոր մանր բուրժուազիայի մի շարք շերտեր արագ-արագ հեռանում են հեղափոխությունից և դուրս գալիս ազգային-հեղափոխական բլոկից:

Պարզ է, վոր գասակարգային ուժերի այժմյան ընդհանուր դրության համար բնորոշ է ուժերի խմբակցությանց մեծ տեղափոխություն: Գա հեղափոխության գարգացման ճ գն ա-նը. գա հեղափոխության խավերի մի շարքը ժ ա մ ն է: Բուրժուական ազգային հեղափո-բաժանվում է միասնական ազգային հեղափո-խական ճակատից: Այդ խավերում նկատվում է

յերկրի ներսում տենդենց՝ բլուկի մեջ մտնելու
 ավատատերերի հետ և դրսում՝ միջամտողների,
 իմպերիալիստների հետ, վորոնք, իհարկե, նույն-
 պես յերկրի ներսում են գործում: Մենք դի-
 տում ենք բուժուագիայի աջացման պրոցեսը,
 նրա խավերի նշանակալից մասերի հեղափոխու-
 թյան նկատմամբ թշնամական ույժ դառ-
 նալը՝ զարգացման ներկա շրջանում: Իրա հետ
 միասին խմբակցությունների մեծ տեղափոխու-
 թյուն է կատարվում Գոմիխդանի ներ-
 սում, ազգային կառավարության
 մեջ, բանակում: Խմբակցությունների այդ
 տեղափոխությունը կապված է բաղխումների,
 պայքարի հետ, վորոնց սահմաններն անհնար է
 միշտ նախագուշակել:

Յերբ խոսք է բացվում Գոմիխդանի
 մասին, պետք է նկատի առնել, վոր դա մեկ
 վորոշ կազմակերպչական կճեպի ներքո ապրող
 դասական արգելի բլուկ ներկայացնող կազ-
 մակերպություն է: Գոմիխդանի մեջ չկա այն
 խիստ կուսակցական կարգապահությունը, կազ-
 մակերպչական խիստ ձևավորումը, վոր հատուկ է
 քաղաքական կուսակցություններին՝ այս բառի
 սովորական իմաստով: Այս հանգամանքը չափա-
 զանց կարևոր է: Յերբ մենք խոսում ենք
 Գոմիխդանի և նրա աջ ու ձախ թևերի
 բաժանման մասին, պետք է նկատի առնել, վոր
 այստեղ, ըստ ելուժյան, յերկու կուսակցու-
 թյուն կա (իսկ հաշված կոմունիստներին՝ յե-
 րեք), վորոնք ապրում են մի կուսակցու-

թյան շրջանում: Այդ յերկու կուսակցու-
 թյունները չեն հպատկվում մի ընդհանուր կու-
 սակցական կարգապահության: Առհասարակ Գո-
 միխդանի կարգապահությունը իր ամբողջու-
 թյամբ ծայր աստիճան հեռու յե կուսակցական
 կարգապահության այն հասկացողությունից, վոր
 ունենք մենք, կոմունիստներս: Ապա՝ յերբ
 խոսվում է ազգային-հեղափոխական բանակների
 մասին, պետք է նախ և առաջ նկատի առնել,
 վոր դրանք վարձու բանակներ են, վոր
 նրանց մեջ միասնական հրամանատարու-
 թյան սկզբունքը բնավ չի իրագործված: Կորպուսների
 հրամանատարները հաճախ իրարից անկախ են լի-
 նում, իրար դեմ թակարդ են լարում և այլն:
 Յեթե դուք վերցնելու լինեք Գոմիխդանի և այդ
 կուսակցության անգամ առանձին-առանձին
 դրավարների փոխհարաբերությունը, կտես-
 նեք, վոր հաճախակի այդ դրավարները ծայր
 աստիճան «թեթև» են վերաբերվում իրենց կու-
 սակցական կազմակերպության նույնիսկ գերա-
 գույն որգանների վճիռներին, և կուսակցական
 կարգապահության խախտումը հաճախ սուր կեր-
 պով արտահայտված դասակարգային իմաստ
 է ունենում:

Գյուղացիական և բանվորական
 խնդիրների բնագավառում ազգային կառավա-
 րության քաղաքականությունը, կամ ավելի
 բացարձակ մասերի, նրա առան-
 ձիշա՝ նրա առանձին մասերի, նրա առան-
 ձին որգանների քաղաքականությունը հաճախ
 ձուլվում է մեկ բավարարելուց՝ անգամ բա-

վական համեստ չափանիշով: Բանվոր դասակարգի
 և գյուղացիության համար հեղափոխության
 խոշորագույն նվաճումներից մեկը՝ զանազան
 ազատություններն են — գործապուլսների, հավա-
 քույթների, փողոցային զինված խմբերի և այլն:
 Սակայն ազգային-հեղափոխական պայքարի մի
 շարք մասերում մենք ակնատես ենք յեյուլթ-
 ների, վորոնք շատ հեռու-յ են բանվոր դա-
 սակարգի և կոմունիստական կուսակցության
 նվազագույն պահանջները բավարարելուց: Դա
 կապված է դասակարգային պայքարի ընդ-
 հանուր ընթացքի և Գոմինդանի ու ազգային
 կառավարության ներսում կատարվող խմբակցու-
 թյունների զանազան տեղափոխությունների հետ:
 Գոմինդանի մեջ զանազան շերտերի գոյացումը
 վաղուց հետե նկատելի յեր: Դեռ ևս 1925 թ.
 Սուն-Շիում տեղի ունեցավ աջակողմյանների
 համագումարը, վորի մասնակիցներն արտաքու-
 վեցին Գոմինդանից: Այդ համագումարն ուղ-
 դակի կոմունիստներին՝ «կարմիր-
 ների» դեմ պայքար մղելու լողունգ
 առաջադրեց: Նա իմպերիալիստների հետ համա-
 ձայնության գալու ծրագիր առաջ քաշեց, թշնա-
 մանքի ծրագիր Ս. Ս. Հ. Միության դեմ, բան-
 վորական և գյուղացիական շարժման ճնշման
 ծրագիր: Պետք է ասել, վոր մասնակիցներին
 կտրեցին-հանեցին Գոմինդանից, Դա պետք է
 հաշվի առնել, վորովհետև այժմ տեղի ունի
 Գոմինդանի մեջ ձախացումի պրոցես, և դա
 առաջին հերթին մենք պիտի ուշադրության

առնենք: Կամ թե չե վերցնեք մի այնպիսի
 անցք, ինչպես անցած տարվա մարտի 20-ի
 հեղաշրջումն է, Չան-Կայ-Շիի հեղա-
 շրջումը: Այն ժամանակ Կանտոնում, «ձախա-
 կողմյան» Վան-Տին-Վեեմին, վոր մի խմբակցու-
 թյան պարագլուխն էր, փոխարինեց Չան-Կայ-
 Շին, հենվելով իրեն հավատարիմ զինված ուժե-
 րի վրա: Նա ազգային կառավարության ներսում
 դասակարգային հարաբերությունները վորոշ
 փոփոխութուն կատարեց: Այստեղ Գլխավոր
 պատճառը, հասկանալի յե, ավելի ու ավելի բարձ-
 րացող բանվորա-գյուղացիական շարժման
 նկատմամբ բուրժուազիայի գիտակցած կիսա-
 թշնամական, ապա և թշնամական որիյենտա-
 ցիան էր:

Մի ուրիշ ձրինակ, Համեմատաբար մոտ
 ժամանակներս, ազգային կառավարության Կան-
 տոնից տեղափոխվելուց հետո, այնտեղ մնացել էր
 Լի-Տին-Սինը, Գոմինդանի աջակողմյան գորա-
 վարներից մեկը: Ահա այս իսկ գորավար Լի-
 Տին-Սինը, վոր ինքը Գոմինդանի կուսակցու-
 թյան անդամն է, ցրեց Գոմինդանի Կանտո-
 նի կոմիտեն, նշանակեց իր կոմիտեն և
 ապա հրապարակեց մի շարք կարգադրություն-
 ներ, վորոնք շատ են խանգարում բանվորական
 և գյուղացիական զարգացող շարժումը: Այդ պայ-
 քարը տեղ-տեղ շատ սուր ձև էր ընդունել, յեր-
 բեմն ուղղակի բաղխումներ են տեղի ունեցել: Մի
 շարք նման վրդովեցուցիչ դեպքեր, ինչպես
 մի քանի բանվորների զնգակահարումը Սան-

կոռոււմ, վորոնք մասնակցել եյին ոտար կոն-
ցեսսիայի գրավմանը, ինչպես Գուան-Գուան
գավառում՝ պաշտոնական որգանների բռնած
դիրքը, վոր ավելի մոտ է «Ղենտրինների» և
նրանց զինված խմբերի, «մինտուանի» դիրքին,
քան գյուղացիական միությունների և նրանց
զինված խմբերի դիրքին — այս ամենը միևնույն
ոպերայի կտորներն են: Պետք է նկատի ունե-
նայ, վոր մինչև հիմա գործնականում հողային
վերանորոգության խնդիրը դեռ չի գրված, ինչ-
պես հարկն է: Գլխավոր միջոցը, վոր ծրագրը-
ված եր — կապալավարձի նվազեցումը 25 տոկո-
սով — նշանակալից չափով թղթի վրա մնաց, նշա-
նակալից չափով այնպես եր շուռ սված, վոր նրա-
նից ոգտվեցին վոչ այն խավերը, վորոնց համար
նա ճրագրված եր:

Կարելի յեր հիշատակել մի շարք պաշտոնա-
կան որգաններ և մասնավորապես ռազմական
որգաններ, վորոնք հանդես են յեկել ըն դ դ ե մ
բ ա ն վ ո ռ ա - գ յ ու ղ ա ց ի ա կ ա ն կ ա զ մ ա -
կ ե ռ պ ու թ յ ու ն ն ե ռ ի՝ ռեպրեսսեով միջոցնե-
րով: Ինքնին հասկանալի յե, վոր այդ ամենը
տեղի յե ունեցել շնորհիվ հիմնական վորոշ դա-
սակարգային որիյենատացիայի:

Ճիշտ է, բանն ամենուրեք միատեսակ չէ:
Այստեղ բազմաթիվ զանազանություններ կան:
Սակայն այնու հանդերձ պետք է ասել, վոր
Գոմինդանի ձախակողմյան տարրերի կազմա-
կերպությունները և նրանց սզդեցության ներ-
քո գտնվող կառավարական և զորական որգան

ների թշնամական յերույթները բանվորա-գյու-
ղացիական շարժման դեմ՝ բ յ ու ը ե դ ա ն ու մ
և դ ա ո ն ու մ ե ն վ ո ռ ո շ ք ա ղ ա ք ա կ ա ն գ ի ծ,
վ ո ռ ծ ա յ ը տ վ ո ղ հ ա կ ա հ ե դ ա փ ո խ ու թ յ ա ն
գ ի ծ ն ե:

Այստեղ պետք է հիշատակել նաև այնպիսի
բաներ, ինչպես որինսակ՝ ձախակողմյան գոմին-
դանականների զանազան փորձերը՝ կապվելու
խմբերիալիստական խմբակցությունների հետ
և այլն: Թեև մեր արամագրության ներքո առանձ-
նապես առաքիայական նյութեր չկան այդ մա-
սին, այնու հանդերձ մեր խորին համոզմունքով
այդպիսի փորձեր արվում են: Գոմինդանի
այդպիսի փորձեր արվում են: Գոմինդանի
ներսում ամբողջ այդ պայքարն արտահատվում
են ավակողմյան և ձախակողմյան թեվերի պայքա-
րի մեջ: Ձախակողմյան անդեհնցները վերջին
ամիսների ընթացքում իրենց վառ մարմնացումն
են գտել այսպես կոչված Չան-Կայ-Շիի
դիկտատուրայի մեջ, վորը գերագույն
հրամանատար, ազգային կառավարության նա-
խագահ և Գոմինդանի կենտրոնական գործադիր
խազան և Գոմինդանի կենտրոնական գործադիր
կոմիտեյի նախագահն է յեղել, այսինքն՝ ըստ
կոմիտեյի նախագահն է կենտրոնացրել յերկ-
եյության, իր ձեռքում է կենտրոնացրել յերկ-
րի քաղաքական կազմակերպության յերեք գըլ-
խավոր գծերով կարևորագույն ֆունկցիաները:
Չան-Կայ-Շիի դիկտատուրան խոշոր բաղխումներ
առաջ բերեց Ուխանի ավելի ձախակողմյան ազ-
գային կառավարության և Չան-Կայ-Շիի միջև:
Մի ժամանակ, ըստ եյության, յերկու կենտրոն
կար — մեկը՝ Նանչանում, Չան-Կայ-Շիի շտա-

բում, իսկ մյուսը՝ Ուխանում, վորտեղ գտնվում էր ազգային կառավարութիւնը:

Այդ բաղխումը իր խորունկ դասակարգային հողն ունի, վոր չի կարելի սքողել «անհատական ինքնասիրութիւնների պայքարով» և այլն: Այդ բաղխումը կապված էր Գոմինդանի միջի ձախակողմյան և աջակողմյան կուսակցութիւնների պայքարի հետ, վոր առանձնապես սուր բնույթ է կրում ձախակողմյան գոմինդանականների և Չինաստանի կոմունիստական կուսակցութիւն միջև:

Հետևաբար, մենք արդեն իսկ այստեղ այն տեսակ փաստեր ունենք, վորոնց մեջ միասնական ազգային-հեղափոխական շարժումից անջատվող աջակողմյան ուժերի համախմբումը գտել է իր վառ արտահայտութիւնը:

Կարելի յէ գանազան փաստերի մի տողակ բանալ, և բոլորը կհաստատեն, թէ ինչպես ազգային ճակատի ներսում ծավալվող դասակարգային հակամարտութիւններն անդրադառնում են և՛ Գոմինդանում, և՛ ազգային կառավարութիւն մեջ և՛ անգամ բանակներում, իսկ առանձին-առանձին հրամանատարները, առանձին քաղաքական գործիչները տանվում են մեկ և մյուս կողմերի միջև: Անտարակույս խմբակցութիւնների գանազան տեղափոխութիւնները, բաղխումներն այս բոլոր հիմնարկութիւններում՝ սկսած բանակից մինչև կենտրոնական ազգային կառավարութիւնը՝ իրենց վտտի սակ ունեն վորպես հասար-

բակական դասակարգային շարժման նյութը: Այդ շարժումը անդրադառնում է բոլոր ղեկավարող վերին կազմակերպութիւնների մեջ, վորոնք խոշորագույն զերն են իսողում ազգային հեղափոխութիւն զարգացման գործում:

Ինքնին հասկանալի յէ, վոր ըստ եյության այլ կերպ ել լինել չի կարող, վորովհետև Չինաստանում գոյութիւն ունի գոմինդանյան միակ կառավարող կուսակցութիւն սիստեմը, վոր դասակարգերէ բոկ է, և այդ դասակարգերէ միջև հակամարտութիւնն որ ավտէր ավելի յէ սրվում: Գոմինդանյան այդ կուսակցութիւններէց է կազմվում ազգային կառավարութիւնը, վոր կապված է բանակի կազմակերպութիւնների և կորպուսների հրամանատարների հետ: Զորքի հրամանատարական կազմը նշանակալից չափով բաղկացած է բուրժուական, առևտրական և այլ տարրերից: Բացի այդ, պետք է նկատի առնել, վոր Հյուսիսային արշավանքի ընթացքում ազգային-հեղափոխական բանակին հարել են նաև գանազան զորավարներ, վորոնք հարել են այն չափով, ինչ չափով ազգային-հեղափոխական զենքը շարդել է նրանց խզակութիւնները: Այն ամենը բազմաթիվ բաղխումների նյութ է ստեղծում, ուստի և հասարակական-դասակարգային մեխանիկայի բոլոր տատանումները չեն կարող չանդրադառնալ բովանդակ ճակատի յերկարութիւնը, բոլոր ապարասներում և ինստիտուտներում, վորոնք կազմակերպում և վարում են ազգային-հեղափոխական շարժումը:

6. ՉԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱ-
ԿԱՆ ՏԱՔՏԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ահա իրերի այս կացութիւնը մեր առջև շատ բարդ տաքստիկական խնդիրներ ե դնում: Տաքստիկական խնդիրների ամենադյու- րին լուծումը կլինե՞ր—լուծումն ըստ նմանողու- թյան մեր՝ ուսուսական հեղափոխութեան ըն- թացքի: Շատ հաճախ մեր ընկերներից շատերը հակամետ են ուսուսական հեղափոխութեան փորձը՝ փետրվարից սկսած մինչև հոկտեմբերի ժամանակաշրջանը՝ մեքենաբար տարածելու չին հեղափոխութեան զարգացման ընթացքի վրա: Մինչդեռ այն, ինչ վերը ասվեց չին հեղափո- խութեան իրորինակութեան մասին, ծայր աստի- ճան վտանգավոր է դարձնում այդ մեքենական նմանացումները ուսուսական հեղափոխութեան ընթացքի հետ: Ահա, որինակ, մի կոպիտ նմա- նացում. Չան-Կայ-Շին՝ Կերենսկին է, Գոմին- դանը՝ Եսերները և մենշևիկների կուսակցու- թիւնը: Դասակարգային պայքարի ծավալումը Կերենսկու ղեկատարային է բերում Չան- Կայ-Շին: Դասակարգային պայքարի ծավալու- մը՝ մենշևիկների և Եսերների կուսակցութեան քայքայումն է, բոլշևիկյան կուսակցութեան առանձնացումը: Այստեղից—տաքստիկական

յեզրակացութիւն՝ Կերենսկի — Չան-Կայ-Շիի ուղղակի տապալման որինտացիա, զինված ապստամբութեան և չին Կերենսկի-Չան-Կայ- Շիի իշխանութեան դեմ զինված պայքարի՝ լո- դունգ, անշատ ուժ Գոմին դանից, վորպես պատմականորեն քանդվելու դատապարտված կազ- մակերպութիւնից, «կորչեն տասը կապիտա- լիստ-մինիստրները» լոգունգը և այլն: Ահա նմանեցումն: Յե՛վ մեզ թվում է, թե ընկ. Ռա- դեկը դեմ է անում հենց խնդիրն այսպես դնե- լուն: Նրա համար միայն բնորոշն այն է, վոր յերբ նա ամենաառարկայական խնդրին է մո- տենում՝ արդյոք սկսե՞լ կռիվը, սկսե՞լ ապստամ- բութիւնը, թե վոչ, նա անում է վորոշ ուղե- պտույտ: Նա ասում է՝ «Թերևս կարելի յէ, թե- րևս վոչ»:

Այդ նմանեցումներն ու յեզրափակումները տարորինակորեն հյուսում են իրար ճիշտն ու սխալը, ուղիղն ու խորապես սխալը:

Առաջինն ու հիմնականը, վոր ամենաեա- կան դերն է խաղում, հետևյալն է՝ փետրվա- րից մինչև հոկտեմբեր մեր շրջապատի և չին հե- ղափոխութեան հմիկվա շրջապատի միջև յեղած տարբերութիւնն այն է, վոր Կերենսկին ի մպերիալիստական քաղաքականու- թիւնն էր վարում, իսկ ազգային-հեղափո- խական բանակն ու ազգային կառավարութիւնը որեկտիվորեն ներկայումս հակաիմպերիա- լիստական քաղաքականութիւնն են վարում: Կերենսկու վարած պատերազմն ու Կերենսկու

գրոհը — իմպերիալիստական բնույթ ունեյին: Հայրենիքի պաշտպանութեան գործում մենք վոչ միայն կերենսկուն չեյինք ողնում, այլև այդ պաշտպանութեանը հակառակ եյինք, մենք կազմալուծում եյինք այդ պաշտպանութիւնը: Իսկ ազգային-հեղափոխութեան պայքարի նկատմամբ վոչ վոք չի խիզախի ասելու, թե, որինակ, կոմմունիստները չպիտի ոգնեն հյուսիսային արշավանքին: Ավելին՝ կոմմունիստների դիրքը, այսինքն՝ ամենահետևողական, արմատական հեղափոխական դիրքը այն է, վոր կոմմունիստներն այդ հողի վրա հնարավոր փթած կոմպրոմիսները կանխեն, ընդլայնեն հաղթական ռազմապայքարը և, իհարկե, հաշվի առնելով իմպերիալիստական տերութեանց տարածայնութիւնների սգտագործման հնարավորութիւնը, հանդիսանան ազգային ազատագրութեան գաղափարի ամենավճռական ներկայացուցիչները: Բանվոր գասակարգի տեսակետից այդ պէս պետք է զրկել խնդիրը: Դա փոխում է պատկերը, այդ մոմենտը խոշորագույն դեր է խաղում: Պայքարել, վորքան վոր ուժերը ներում են իմպերիալիստական ճնշումի դեմ — անհրաժեշտ է, իսկ ընկ. Ռադեկը, Շանհայի զբաղումից մեկ թե յերկու որ ատաջ, իր գեկույցի մեջ ասում էր. «Ընկերներ, չին հեղափոխութեան ծանրութեան կենտրոնը Շանհայում չէ, նրա մեջ չէ, թե մոտիկ ապագայում Շանհայը կգրավվի, թե վոչ: Ծանրութեան կենտրոնը հիմա Խանկոուի մեջ է: Ծանհայի զբաղումն առհասարակ շատ դժվար

բան է»: Մինչգեռ Շանհայի և Շանհայի խնդրի շուրջը մի ժամանակ ազմկում էր վողջ աշխարհը: Շանհայը բոլոր վեճերի կենտրոնն էր: Առել թե «առհասարակ դժվար է գրավել» Շանհայը, կնշանակի ժխտել միլիտարիստների և նրանց ոտար հովանավորողների դեմ պայքարելու հնարավորութիւնը, կնշանակի ժխտել հյուսիսային արշավանքի նշանակութիւնը, կնշանակի քարոզել պարտութիւնն ազգային ազատակի պարտութեան դակատում: Մենք պիտի գրութեան պայքարի ճակատում: Մենք պիտի պարզ տեսնենք, վոր միլիտարիստների և իմպերիալիստների դեմ պայքարելու խնդիրները դեռ ևս չեն լուծված: Պետք է խորտակել Չան-Չո-Լինին մինչև վերջ, իմպերիալիզմը պետք է վերջնականորեն յետ մղել: Ուստի և վոչ մի դեպքում չի կարելի հակադրել ավատատերերի և իմպերիալիստների խորտակման խնդիրը ազգային-հեղափոխական միասնական ճակատի մեջ ծավալվող դասակարգային պայքարի խնդրին: Պեկինի խնդիրը և այլն կանգնած է հեղափոխական ժողովրդի առջև, և յերես շուտ տալ դրանից չի կարելի: Դրամեջ է, այսինքն՝ ռազմական ճակատի նկատմամբ զբաղական վերաբերմունքի մեջ է ամենամեծ տարբերութիւնը այն միջավայրից, վոր ունեցել ենք մենք կերենսկու որոք... Հետևաբար բանվորական կազմակերպութիւններն ու կոմմունիստական կուսակցութիւնը պիտի հաշվի առնեն այդ խնդիրը, չնայած վոր «ինքն ըստ ինքյան» Չանհայ-Շին բնավ ավելի լավ չէ, թերևս ավելի

վատ ե, քան կերենակին: կերենակին մանր բուրժուական դեմոկրատ եր, իսկ Չան-Կայ-Շին՝ խոշոր բուրժուակալի ներկայացուցիչը: Պատերազմի խնդրում մենք պետք է ակտիվ կերպով պայքարել յինք մանր-բուրժուական դեմոկրատ կերենակու դեմ և նրան վորևէ ոգնություն հասցնելը կնշանակեր դավաճանել հեղափոխության: Սակայն պրոլետարիատի կուսակցությունը կարող եր ոգնել Չան-Կայ-Շին, քան ի դեռ նա ակտիվ պատերազմ եր մղում միլիտարիզմի և իմպերիալիստների դեմ, քանի դեռ նա չեր անցել հակառակ բանակը ու չեր դավաճանել, և չնայած վոր, ըստ իր դասակարգային եյության, խոսելով վերացականորեն, նա ավելի «աջակողմյան» է և «վատ», քան կերենակին: Ի՞նչն է ճիշտը ընկ. Ռադեկի պնդումների մեջ: Այն, վոր պետք է ուժեր հավաքել Չան-Կայ-Շիի դեմ պայքարել ու համար, վոր Չան-Կայ-Շին անխուսափելիորեն դառնում է բանվորների և գյուղացիների թշնամին: Ի՞նչն է սխալը այդ պնդումների մեջ: Այն, վոր ընկ. Ռադեկի համար ճակատի խնդիրը գոյությունն չունի: Սխալ է նույնպես զինված կռիվ բռնվել, առանց նախապատրաստված ուժեր ունենալու: Լենինը ուսուցել է անվախ վարել ապստամբությունը: Բայց Լենինը ուսուցել է նաև «չխաղալ ապստամբության հետ»: Այստեղից՝ յեղրակացություն հյուսիսային ապստամբությանը ոգնություն (իսկ կերեն-

ակու որոք պատերազմի դեմ): Ուզնություն «Չան-Կայ-Շիի բանակին, վոր պայքար է մղում միլիտարիստների դեմ: Բայց միաժամանակ ուժերի համախմբումն Չան-Կայ-Շիի դեմ: Համապատասխան պրոպագանդ գանգվածների և բանակի մեջ: Աջակողմյան գոմինդականներին վտարելու ուղեգրի: Չան-Կայ-Շիին «ընդապատելու» ուղեգրի: Չան-Կայ-Շիից կռիվ ընդունել մի միտայն համապատասխան նախապատրաստությունից հետո և այլն:»

«Շմանեց ու մ» համարյա երկուրդ: Գոմինդանը - մենշևիկներն ու եսերներն են: Այդ ճահճից մենք ինչքան շուտ հանելու լինենք մեր կոմունիստական վաշտերը, այնքան լավ: Բարոյականն այդ է: Սակայն այստեղ աչքաթող է արված մի այլ առանձնահատկություն, այսինքն այն, վոր Գոմինդանը ուրույն տիպի կազմակերպություն է. նա բռնում է միջին տեղը բաղաբական կուսակցության և այնպիսի կազմակերպության միջև, ինչպես խորհուրդներն են, վորոնց մեջ մտնում են զանազան դասակարգային խմբակցություններ: Եսերների (կամ մենշևիկների) հեռամանեցման կարը քանդվում է ամբողջապես: Դասակարգային տեսակետից՝ եսերները մանր-բուրժուական կուսակցություն են և վոչ թե դասակարգերի բրկ: Իսկ Գոմինդանում ազատամիտ բուրժուական էլ տեղ ունի (վորը մեզանում կազմակերպված եր կադետական կուսակցու-

թյան մեջ և հեղափոխութեան զարգացման շատ ավելի վաղ շրջանում դարձավ հակահեղափոխական), և՛ մանր-բուրժուազիան, և՛ բանվոր դասակարգը: Կազմակերպչական տեսակետից Գոմինդանը, ըստ էությունից, կուսակցութունն է՝ բառի սովորական իմաստով: Գոմինդանի կազմը թույլ է տալիս նվաճել նրան ներքևից, կատարելով դասակարգային խմբակցութունների տեղափոխութուն և վանելով աջակողմյան, «քեմալական» տարրերը, վորոնց՝ իբրև ամբողջութուն՝ խառնել Գոմինդանի հետ—կը լինի անմիտ: Մեր առջև պետք է կանգնած լինի խնդիր և պարտականութուն՝ ոգտագործել սւ այդ առանձնահատկութունը չին հեղափոխութեան ընթացքում: Կամ, միգուցե, պետք է թքել նրա վրա:

Մենք կարծում ենք՝ կոմունիստի անելիքը Չինաստանում այն է, վոր նա հաշվի առնի և ոգտագործի այդ առանձնահատկութունը: Ինչպես: Պետք է ավելի ու ավելի ընտրական զանգվածային կազմակերպութուն դարձնել Գոմինդանը: Դա հնարավոր է և կատարվում է Գոմինդանի ներսում: Բանվորները ներքևից սկսելով պետք է շարունակ ծանրութեան կետը Գոմինդանում շարժեն դեպի ձախ: Կոմունիստները պետք է Գոմինդան կուսակցության մեջ քաշեն ձախակողմյան արմատական տարրերը, ոգնեն, նրանց՝ կազմակերպելու, հենվեն նրանց վրա և այդպի-

սով փոխեն կազմակերպութեան հասարակական կազմը: Կարելի՞ յե արդյոք անել այդ: Մենք պնդում ենք, վոր կարելի յե: Վոր ընդհանրապես այդ ամենը հենց այդ կերպով ել կվերջանա, բնավ վոչ մանակ, մինչև յերբ այդ պրոցեսը կարող մանակ, մինչև յերբ այդ պրոցեսը կարող տավոր են ոգտագործել այն, մինչև վոր ուշտետավոր են փճոսումով դրան վորոշ սահմանի վճռական բաղխումով գրան վորոշ սահմանի: Իհարկե, կարելի յե մեծ աղմուկ բարդրվի: Իհարկե, թե մենք խորհուրդները «խառնում ենք» Գոմինդանի հետ: Բայց դա աղմկարարներին չի ազատում շոշափելի կերպով ապացուցելու պարտականութունից, թե այդ բանը չի կարելի անել: Կան միքանի որինակներ: 1925 թ. Համադումարի մասնակիցներին դուրս արին: «Ձախակողմյան գոմինդանականների ասոցիացիան» (իրոք աջակողմյան և վոչ թե ձախակողմյան), վոր հակակոմունիստական քաղաքականութուն վարեցին, Գոմինդանի վերջին պլենումին արտաքսեցին: Դա այնու ձևին այնու ձևին արտաքսեցին: Ո՞վ կարող է ամենայնիվ մի բան նշանակում է: Ո՞վ կարող է ասել, թե լեռանդուն աշխատանքով չի կարելի և՛ հետագայում շարունակել Գոմինդանի ներսում ուշտետի տեղափոխումը դեպի ձախ: Վոչ վոք այդ ասել չի կարող: Վոչ վոք յերբեք չի հոստատել, թե մինչև վերջ, մինչև պրոլետարական դիկտատուրան, Գոմինդանի ներսում ուշտետի շարժումն այս տեսակ տեղափոխու-

թյան ուղիով պիտի ընթանա: Ավելի հավանա-
կան է հակասութիւնների պայթումը առավել
կամ նվազ մերձավոր ապագայում: Սակայն վի-
ճելի խնդիրն այդ չէ: Կարելի յե տեսականորեն
նույնիսկ յենթադրել այսպիսի դեպք, յերբ խոր-
հուրդներն ել մինչև վերջ չեն «նվաճվում», և
այրուեստարական կուսակցութիւններն ապստամ-
բութիւն են հարուցանում ն ր ա ն ց դ ե մ: Բ ո-
ւորն ել հիշում են, թե ինչպես մենք հուլիսյան
որերի նախորդակին Մոսկվայում զինված ցույց
սարքեցինք Մոսկվայի խորհրդի դ ե մ: Կամ
ինչպես մենք Պիտերում* յեղնում եյինք խոր-
հրդային կազմակերպութիւնների վորոշումների
դ ե մ և զինված ցույց անում: Տեսականորեն
կարելի յե յենթադրել դեպք, յերբ ապստամբու-
թիւնն իսկ խորհուրդների դեմ վնար: Հո տեղի
ունեցավ, որինսակ, Մոսկվայում այնպիսի կա-
ցութիւն, յերբ մենք ապստամբութիւն առաջ
բերինք զինվորական խորհրդի դ ե մ, վորտեղ
նստած եյին եսերական ֆելդշերներ, և հենվեցինք
«գարնիգոնի ժողովի» վրա, վորը բաղկացած եր
իսկական զինվորներէց: Այդ նույնպես հիշում
են բոլոր մոսկվացիները: Մենք չզիտենք, թե
Գոմինդանում գործն ինչպես ե լինելու: Մեծ
շանսեր կան կարծելու, վոր հեղափոխութեան
ղարգացումը կբերի, հակասութիւնների պայ-
թումին կհասցնի Գոմինդանի ներսում: Իսկ ներ-

* Անինդրադը առաջ կոչվում եր Պետերբուրգ կամ կարճ
Պետեր:

ծանոթ. թարգմ.

կայումս կոմունիստները պարտավոր են ոգաս-
գործել բ ո լ ո Ր հնարավորութիւնները, վոր
նրանց ներկայացնում ե Գոմինդանի յուրահա-
տուկ կազմը:

Ընկ. Ռադեկի տեսակետը՝ Գոմինդանից
դուրս գալու գաղափարի հետ խաղալը և, հետե-
վաբար, Գոմինդանը վորոշ չափով աջակողմյան-
վաբար, Գոմինդանը վորոշ չափով առավել ևս զարմանալի յե, քա-
ներին հանձնելը՝ առավել ևս զարմանալի յե, վոր կոմ-
նի վոր ընկ. Ռադեկը կոմիմնակից ե, վոր կոմ-
մունիստները մտնեն գոմինդանական կուսակ-
ցութեան մեջ: Այստեղ միանգամայն կարելի յե
ասել, թե «տրամաբանութիւնը գնացել ե ան-
տառ՝ զբոսնելու»:

Տեսականորեն կարելի յե պատկերացնել մի
այնպիսի դրութիւն, յերբ մենք հարկադրված
կլինենք դուրս գալ ազգային կառավարութիւ-
նից: Տեսականորեն կարելի յե շատ բան մտա-
ծել: Հնարավոր ե, վոր մենք յերբեկիցե հանդես
բերենք լոգունգ՝ «դուրս յեկ Գոմինդանից»:
Բայց հիմա դրա հասար բացարձակապես վնչ մի
հիմք չկա: Հիմա, ընդհակառակը, պետք ե պայ-
քարել Գոմինդանին տիրանալու համար, բոլոր
ուժերը պետք ե նվիրել՝ Գոմինդանի ներսում
ապահովելու համար ծանրութեան կետի աեղա-
փոխութիւնը դեպի ձախ: Ահա թե ներկայումս
ճիշտ տաքտիկան վնրն ե: Ահա այն, ինչ բղիտում
ե չինական այժման կացութիւնից: Տեղեբում,
Գոմինդանի վարին բշխներում, արհեստակցա-
կան միութիւնների միջոցով, գյուղացիական
կոմիտեները միջոցով բանվորական կուսակցու-

թյունը պետք է ներքևից փոփոխի Գոմինդանի հասարակական կազմը: Նույնպես ներքևից պետք է շարժել մասսաների ներկայացուցիչներին և մտցնել նրանց տեղական ինքնավարության որգանների, իշխանության գավառային որգանների մեջ, զինելով բանվորներին և գյուղացիներին ու դարձնելով Գոմենդանը ավելի ու ավելի մասսայական կազմակերպություն: Միայն այդ հողի վրա յենք խոսում այնպիսի քայլի ուղիղ լինելու մասին, ինչպես պետական տարրատի, բանակի և այլն նվաճումն է:

Դասակարգային ուժերի, նրանց զարգացման տենդենցների և աշատեղից բզխող տաքտիկայի մեր գնահատումը միանգամայն պարզ է. զանազան ողակները կառված են իրար. մի բան, վոր չի կարելի ասել ուրիշ «կառուցվածքների» մասին:

Այսպիսով չին հեղափոխությունն ապրում է անցման շրջան. ազգային-հեղափոխական բլուկի ներսում ուժերի մի համադրությունից անցնում է դասակարգերի այլ համադրություն: Այդ անցումն աջող կերպով վախճանին հասցնելու համար՝ պետք է ամեն ինչ, ամեն կարելիություն ոգտագործել, հաշվի առնելով առարկայական շրջապատը, չին հեղափոխության ընթացքի առարկայական առանձնահատկությունները: Միաժամանակ անհրաժեշտ է խստիվ ու յեռանդագին վարել այն գիծը, վոր Կոմինտերնը նշանակել է, վորպես ուղեգիծ դեսլի սոցիալիստական հեղափոխությունը՝ անհրաժեշտ միջանկյալ

եռասպների միջով: Այդ գիծը կարելի չէ վարել այն գեպքում միայն, յեթե ինքը կոմկուան աճի, վորպես բանվոր դասակարգի կուսակցություն, յեթե նա չձածկի իր ուրույն պրոլետարական դեմքը, յեթե նա անի անհրաժեշտ հակադրեցությունը մանր-բուրժուական տեսակի արմատական հեղափոխականների հնարավոր տատանումներին և յեթե, միաժամանակ, նա չխաբվի ձախակողմյան Ֆրազներից, վորոնք պրոլետարական լուրջ քաղաքականությունը փոխում են խաղով:

Մեր գնահատությունը՝ չին հեղափոխություն և նրա հեռանկարների ու եւալ գնահատությունն է: Նա համապատասխանում է վաստեղին, և այդ բանն ազոտ կերպով զգում է իմպերիալիստական բուրժուազիան և «միպերիալիստական բուրժուազիան» սոցիալ-դեմոկրատիան: Այդ պատճառով էլ նրանք նրա համար են այնքան կատաղաբար հակաչինական և հակախորհրդային հարձակումներ կազմակերպում, վոր զգում են չին հեղափոխություն վարգացման ուղիների մեր տված գնահատություն ճշտությունը: Հետաքրքրական է նիշել այն հանգամանքը, վոր ամենվայտթար ուպորտունիստները, զգալով այդ, ոգնում են իմպերիալիստներին, թե յերկյուղից, թե խղճից դրդված: Վերցնենք՝ որինակ, Թոմասի հայտարարությունը: Նա ասում է.

«Յես չեմ հավատում, թե բրիտանական կառավարությունը պատերազմ է ուղում, սա-

կայն ինչ-վոր անհայտ պատճառներով մեր բանակցությունները խզվեցին ճիշտ այն միջոցին, յերբ մենք գրեթե հանգել էյինք բարեհաջող վախճանի: Պետական (!) տեսակետ չէր լինի, հայրենասիրություն (!) չէր լինի կառավարության համար՝ դժվարություններ ստեղծել պատերազմի և խաղաղության խնդրում, կամ աշխատելու՝ կուսակցական կապիտալ շահել այդ տեսակ խնդրում բռնած գիրքի շնորհիվ» (1927 թ. փետրվար 3-ին Դերբիում արատանամ ճառը):

Այսպես ուրեմն թոմասը միանգամայն պարզ կերպով ասում է. «Իմպերիալիստական Անգլիայի՝ չինական հեղափոխության դեմ վարած պատերազմի ժամանակ յես պետք է ոգնեմ սնգլիական կապիտալիստական, իմպերիալիստական կառավարությանը ընդդեմ չինական հեղափոխության»:

Մի այլ տեղ թոմասն ասում է. «Ուպոդի-ցիայի նպատակը քննադատելը չէ, այլ բովանդակ աշխարհին հասկացնելը, վոր ինքը պաշտպանում է կառավարությունը»:

Կամ՝ վերջերք մեր մենշևիկ Աբրամովիչին, վորն ասում է, թե Անգլիային Չինաստանից վճռելու խնդիրը բացարձակապես ցնորական է ու անմիտ բան: Կամ թե՛ վերջերք չինական արհեստակցական միությունները պատվիրակության և Ամստերդամի ինտերնացիոնալի (Միջազգայնականի) պարագլուխների միջև տեղի ունեցած խոսակ-

ցությունը (հաշվետվությունն այդ մասին տպագրված է հոլլանդական սոցիալ-դեմոկրատական «ժողովուրդ» անունը կրող լրագրի մարտի 10-ի համարում):

Այդ հաշվետվության մեջ բառացի կերպով ասված է հետևյալը.

«Պատվիրակության հարցին, թե պատրաստ է արդյոք Ամստերդամի Ինտերնացիոնալը (Միջազգայնականը) մասնաժողով ուղարկել Չինաստան—չին բանվորներին պաշտպանելու նպատակով, տրված իր հետևյալ պատասխանը՝ Արհեստակցական Միությունների Ինտերնացիոնալը (Միջազգայնականը) ի վիճակի չէ այդ բանն անելու: Ներկա պայմաններում դա ցանկալի է չէ, վորովհետև արհեստակցական միությունների շարժումը շինարարական շարժում է (և դա կապիտալիստական յերկրներում), իսկ շինարարություն կարելի չէ կատարել միմիայն այնպիսի յերկրում, վորտեղ իշխում է քաղաքական կարգ ու հանգստություն: Արհեստակցական Միությունների Ինտերնացիոնալը (Միջազգայնականը) չի մտածում պատվիրակություն ուղարկել Չինաստան՝ այնտեղ քաղաքական կարգ ու կանոն վերականգնելուց առաջ»:

Սա արդեն այսպես ասած ափսոսանքալիստական հակադեմոկրատիական տեսակետ է: Միակ միջազգային ուժը, վոր պաշտպանում է չինական հեղափոխությունը, Կոմունիստական չինական հեղափոխությունը, վորովհետև չինական հեղա-

փոխությունը մարդկային հոսարակության մեջ
կատարվող այն հսկայական պրոցեսսի բաղկա-
ցուցիչ մասնիկներից մեկն է, վորի անունն է՝
միջազգային հեղափոխությունը ընդ-
դեմ կապիտալիստական ճնշումի և
ստրկացման:

7. ԱԶԳԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՃԳՆԱ- ԺԱՄՆ ՈՒ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՆԵԼԻԲԸ *

Չան-Կայ-Շիի հակահեղափոխական հեղա-
շրջումը, Շանհայի պրոլետարների զնդակահա-
րումը, Հանկայշիյան զորավարների դահճային
սխրագործությունները նոր կացություն
են ստեղծում չինական ազգային-հեղափոխական
շարժման մեջ: Մենք ասում ենք «նոր կացու-
թյուն», բայց վնչ ընդհանրապես կացության
փոփոխության իմաստով: Այդպիսի փոփոխու-
թյուններ միշտ ել տեղի յեն ունենում: Մենք
կացության արմատական փոփոխության
մասին ենք խոսում, քանի վոր խոսքը պայքա-
րող դասակարգային ույժերի խմբակցություն-
ների մասին է: Վորովհետև Չան-Կայ-Շիի հեղա-
շրջումը կնշանակի ազգային-հեղափոխա-
կան շարժման ճգնաժամը, նրա բեկման
մոմենտը: Այդ հեղաշրջումը անլ յեղանա-
կով մի շարք հիմնական խնդիրներ է առաջա-
դրում, և անիմաստ կլինեք ժխտել կամ բավա-

* Սույն գլուխը գրված է Չան-Կայ-Շիի ու Ընկերության
(Թ-՞) հակահեղափոխական հեղաշրջումից հետո և, հեռաբար,
չեք մտնում այն գեկույցի մեջ, վոր արված էր Մոսկվայի կոսակ-
ցական ակտիվի ժողովում:

կանաչափ չգնահատել ան ի կացութեան նորութեանը, վոր ստեղծված է Շանհայի և այլ տեղերի բուրժուազիայի հակահեղափոխութեան հետևանքով: Մենք այստեղ հիմա մի կողմն ենք թողնում այն խնդիրը, թե արդո՞ք ուղի՞ք եր չանկաշիջան դահիճներէց բաց պայքար ընդունելը: Ավելի ուղի՞ք չէր լինի արդո՞ք թաքցնել գենքը, չընդունել կռիվը և այդ պիտի թույլ չտալ զինաթափելու մեզ, դուրս հանել ժամանակավորապես կռվի դաշտից բանվորական բանակը և ուշտերը կենտրոնացնել բանվորների, զինվորների և գյուղացիների մասսաներում: Ուշտ հավաքել և կռվի դուրս դալ ան ժամանակ, յերբ այդ ուշտերի համադրութեանը պայքարի շանսեր կտար: Կրկնում ենք՝ այդ խնդիրը մենք մի կողմն ենք թողնում:

Անցնենք, նախ և առաջ, ան ի բանի դասակարգային վերլուծութեանը, ինչ վոր կատարվել է: Վերը ասածներէցս հետո՞ դժվար չե վորոշել այդ դասակարգային իմաստը: Զան-հայ-Շիի հեղաշրջումը՝ աշակերտային դոմինդանականների ապսամբութեանն է, խոշոր բուրժուազիայի ապսամբութեանը Գոմինդանի և Գոմինդանի միջի ձախակողմյան բլոկի դեմ: Այն պրոցեսսը, վոր նկարագրված է վերը, վերջացավ բուրժուազիայի բացահայտ դիկտատուրայով, բուրժուազիայի, վորն անցավ հակահեղափոխութեան բանակը: Բանվոր և գյուղացի զանգվածների ճնշումը, նրանց շարժաման աճումը արդեն իսկ բավական

ուժեղ յեղավ, վորպեսպի խոշոր բուրժուազիան անցներ հակահեղափոխութեան բանակը, բայց դեռ ևս բավականաչափ ուժեղ չե, վոր կարելի լիներ կռվի վայրերում ազգային ազատագրութեան դործի դավաճաններին պետք յեղած հակահարվածը տալ:

Չինաստանի դասակարգային պայքարի վարպայման ավարտված ետապը բնորոշվեց յերկու բանակների դոյութեամբ՝ ավատական միլիտարիստների, խոշոր բուրժուազիայի կոմպրադորական խավերի (միջնորդի դեր կատարող բուրժուազիա), ոտար իմպերիալիստների բանակը՝ մի կողմից, ազգային հեղափոխական բուրժուազիայի, բանվորների, գյուղացիների, քաղաքային արմատական մանր-բուրժուազիայի բանակը՝ մյուս կողմից: Ազատամիտ բուրժուազիան կարող եր վորոշ շրջանում հեղափոխական ինքն ինքն (ի տարբերութեանն ուսական հակահեղափոխական լիբերալիզմի) այն պատճառով, վոր Չինաստանում նրա և ոտար կապիտալի միջև հարաբերութեանն այլ է, քան նախնական խոսակական Ռուսաստանում: Ուստի և դավաճանութեան ժամկետերն այստեղ անխուսափելիորեն տարբեր յեղան և այդ պատճառով պրոլետարական կուսակցութեան տաքտիկական պրոլետարական անխուսափելիորեն պիտի կերպարանափոխվեյին:

Այնու հանդերձ այդ իսկ շրջանը ուներ տենդենց յերկու բանակը յերեքի վերածելու՝ ավատատերեր + կոմպրադորներ + ոտար

կապիտալ կազմում են մեկ բանակ ազգային խոշոր բուրժուազիան՝ մյուս բանակը, և «ձախակողմյան բլոկը» (արմատական մանր-բուրժուազիան, գյուղացիութիւնը, բանվորները) — յերրորդ բանակը:

Ներկա մոմենտը բնորոշվում է այս լեքեք բանակների ներկայութեամբ: Չան-Կայ-Շիի վոհմակը արդեն իսկ զնդահակարում է գյուղացիներին ու բանվորներին, բայց նա դեռ ևս պայքարում է ավատական միլիտարիստների դեմ:

Մյուս կողմից իմպերիալիստները դեմ չեն պաշտպանութիւն ցույց տալու Չան-Կայ-Շիին: Նրանք տեսնում են, վոր այսպես կոչված միլիտարիստների միջև կան շատ սարբեր, վորոնք պատմականորեն մոտ ապագայում դատապարտված են քայքայվելու և դատապարտված են աներկբայորեն:

Այստեղից բղխում է ընթացիկ մոմենտի բնորոշ տենդենցը՝ յերեք բանակների՝ յերկուսի վերածվելը, բայց արդեն «նոր հիման» վրա, ազգային խոշոր բուրժուազիայի և ավատատերերի մի մասի բլոկի հիման վրա ոտար կապիտալի հետ՝ ընդդեմ բանվորների, գյուղացիների և արմատական մանր բուրժուազիայի «ձախակողմյան բլոկի»:

Վոչ մի դեպքում չպետք է մոռանալ այն փաստը, վոր Գոմինգանի կենտրոնական Գործադիր Կոմիտեն «ձախակողմյաններին» է պատկանում: Վոչ մի դեպքում չպետք է մոռանալ այն

փաստը, վոր Ուխանի կառավարութիւնը ներկայումս «ձախակողմյան բլոկի» կառավարութիւնն է: Վոչ մի դեպքում չպետք է մոռանալ այն փաստը, վոր բանակի մեկ մասը, այն ել նշանակալից մասը, Ուխանի կառավարութեան կողմն է պահում ընդդեմ Չան-Կայ-Շիի կառավարութեան: Վերջապես չպետք է աչքաթող անել և՛ այն, վոր կա դեռ ևս կուլի մեջ չմտած ձրնի բանակը: Հասկանալի յե, վոր մեզ սպասում են, ամենայն ավանականութեամբ, բազմաթիվ անակնկալներ, տատանումներ և առանձին անհատների անցումն մի բանակից մյուսը: Սակայն այդ ամենից ուժեղը դասակարգային պայքարն է իմպերիալիստների դեմ մղվող պայքարն արամաբանութիւնն է:

Ներկա պայմաններում ամենալայն զանգվածները աչքում Չան-Կայ-Շին և իր կառավարութիւնը վոչ միայն ավելի ու ավելի յեն ձեռք բերելու բանվորների և գյուղացիների դաճները «կոչումն», այլ և Չինաստանի ազգային ազատագրութեան գործի դավաճանների անունը: Անկարելի յե իմպերիալիզմի դեմ պայքար մղել՝ գյուղացիների և բանվորների հետ պատերազմական վիճակի մեջ դանվելով: Քանի վոր Չան-Կայ-Շին անցել և Ռուբիկոնը, պատմական անցու դարձի ույժը մղելու յե նրան իմպերիալիստների հետ կոմպրոմիսների մեջ մտնելու կողմը: Յեվ այն ել վոչ թե «մանկրային» կոմպրոմիսների, այլ այն անսակի, վոր չափազանց նման

ե բլուկի: Ճիշտ է, այն հանգամանքը, վոր Չան-Կայ-Շիի բանակը նույնպես վարձու բանակ է և իր մեջ կրում է «պրետորականութիան» վորոշ սարբեր, կարող է Չան-Կայ-Շիի քաղաքական և ռազմական կործանումը յետաձգել: Սակայն դա կարող է լինել լույ ժամանակավոր յերևութ: Արժե միայն մտաբերել հյուսիսային արշավանքի պատմութիւնը առաջին իսկ որից: Հյուսիսային արշավանքը աջողութիամբ պսակվեց վնջութե այն պատճառով, վոր հարավային բանակների տեխնիկան թշնամու տեսլանիկայից բարձր էր: Ընդհակառակը, նրա տեխնիկան ավելի ցած էր: Յեվ այնու հանդերձ հարավային բանակները հաղթում էին: Նրանք հաղթում էին այն պատճառով, վոր իրենց մեջ կրում էին ազգային ազատագրութիան խանդն ու ավյունը: Նրանք հաղթում էին այն պատճառով, վոր լայն մասսաները նրանց գալստյան հետ կապում էին իրենց դասակարգային իրաւերն ու հույսերը: Նրանք հաղթում էին այն պատճառով, վոր բանվորական և դյուղացիական կազմակերպութիւնները պաշտպանութիւնն էին վայելում:

Չախ գոմինգանականների Գոմինգանից դուրս գալը և յերկու կառավարութիւնների գոյութիւնը անխուսափելիորեն «հասարակական գիտակցութիւն մեջ» մեծամեծ փոփոխութիւններ են առաջ բերելու: Ուխանը անհրաժեշտորեն լայն մասսաներին ձգող կենտրոն է դառնալու: Նանկինը (Չան-Կայ-Շին և Ընկ.) իր

քաղաքական գրամոզլուխն այնքան արագ քամուն կտա, վորքան ավելի ջերմ կզովաբանինրա քաղաքականութիւնը միջազգային իմպերիալիզմը: Այդ գովասանքը Չինաստանում լավաւոյն պրոպագանդն է Չան-Կայ-Շիի դեմ: Կոմկուսի հեղինակութիւնն անխուսափելիորեն աճելու յե, վորովհետև դեռ հեղաշրջումից շատ առաջ կոմկուսը հանդես բերեց «բուրժուական «զիկտատուրայի» դեմ վճռական սլայքար:

Ուխանը և իրեն հավատարիմ բանակը պիտի դառնան գորքի համար կազմակերպչական կենտրոններ: Հեղափոխական նպատակահարմարութիւնը թելադրում է վճռական միջոցներ Ուխանի կողմից Չան-Կայ-Շիի դեմ (ինչպես հայտնի յե, Ուխանի կառավարութիւնը կարգադրել է Չան-Կայ-Շիին կալանավորել): Աջագորքել է Չան-Կայ-Շիին կալանավորելու և դավաճաններից կողմյան սարտաժնիկներից և դավաճաններից ազատված՝ Գոմինգանը պիտի դառնա իսկական հոյակապ մասսայական կազմակերպչական ու թոքային: Միանգամայն սխալ կլինել Գոմինգանի զրոշակը հանձնել չանկայշիյան վոմմակին: Ընդհակառակը, Չան-Կայ-Շիի հետ պետք է վարվել, վորպես Գոմինգանի և ազգային ազատագրութիւնի դավաճանի հետ: Ուստի և հիմա, տաղրութիւնի դավաճանի հետ, Գոմինգանից թերևս հիմա առանձնապէս, Գոմինգանից դուրս գալու աաքտիկան անխմաստ է: Կիւղաղացիութիւնը, մանր բուրժուակայի նշակալից մասը և բանվորները միաձուլված են նախկինց մասը և բանվորները միաձուլված են շահերի շարժանց տեական և ռեալ ընդհանրութիւնը: Նրանց բոլոր ամենասուր հիմքն ունի:

Յեւ հիմա ամենազլխավորը ամենալաջն մասսայական շարժման ծավալումն է, հողային հեղափոխութեան խիզախ դեկավարումը, մասսայական բանվորական շարժման հետագա հրահրումը, ամենայեռանդուն քաղաքական աշխատանքը բանակում է մասսաների կազմակերպութեան կատարի աշխատանքը: Գյուղացիական միութեանց և կոմիտեաների ստեղծումը գյուղերում, գործարանային կոմիտեաների կազմակերպումը, արհեստակցական միութեաների աշխատանքի ընդլայնումը, գործազուրային կոմիտեաների կամ բանվորական գործազիր կոմիտեաների ստեղծումը, նրանց իրար շաղկապելը, ինչպես և արհեստավորների, անայնագործների, մանր առևտրականների կազմակերպութեանը ժողովրդական լիազորների կոմիտեաների մեջ, բանվորների և գյուղացիների զինումը, Գոմինդանի համար նոր անգամներ շահելը, կոմկուսի ամեն կերպ ամրապնդումը — այս բոլոր խնդիրները պիտի դրվեն առաջին հերթին: Ներկայումս անագին նշանակութեան ունի աշխատանքը գաղափարում: Անհրաժեշտ է, ինչ գնով ել լինի, կարգի բերել գյուղացիական շարժման հետ մտացած մասերը, վորովհետև վերջին հաշիվ գյուղացիական մասսայի ուշքը և այդ մասսայի կենդանի ուշքը կվճռի պայքարի վախճանը: Անհրաժեշտ է խուսափել, բայց կարելի է, կազմակերպութեան այնպիսի ձևերից, վորոնք չին ժողովրդի թշնամիներին հիմք կտային պուսայու ջինաստանի «խորհրդայնացման» մասին: Իրա

հետ պետք է հաշիվի նստել, վորովհետև չին հակահեղափոխութեան անգամները բոլոր պուսաներից փող են փշում, թե «ուս կոմիտեաներն» ուղում են իրենց «ուսական» կարգերը հաստատել և չին ժողովրդի նկատմամբ, թե նրանք նույնպիսի թշնամիներ են, ինչպես և այլ իմպերիալիստները (վորոնց հետ վերը հիշված անգամները սրտագին բարեկամական հարաբերութեան մեջ են): Սակայն չին հեղափոխութեան վորձը գտել է շարժման համար ձևեր, բավականաչափ ճկուն, վորպեսզի իր մեջ առնի լայն մասսաներ: Մասսան կվճռի ինչ իրը — այս լողունգն առանձնապես անհրաժեշտ է ու կարևոր հենց այժմ:

Իժվարին պայքար կա տակավին չին ժողովրդի առջև: Իմպերիալիստներն աջողել են կենտրոնացնել ռազմական ուժերի ահագին քանակութեան: Իմպերիալիստներն աջողել են կաշառել ազգային բուրժուազիային, վոր վախեցած է բանվորների ու գյուղացիների մասսայական շարժումից: Յեւ այնու հանդերձ, Հնայած Չան-Կայ-Շիի հակահեղափոխական հաղթանակին, Հնայած «խաղաղասերների», «ամենաքրիստոնյա» իմպերիալիստների հաճանավերին ու սկանսկիրներին, չին հեղափոխութեանը կապրի ու կղարգանա: Վորովհետև նա տասնյակ միլիոններ է վորքի հանել՝ հեղափոխական մեծ ստեղծագործութեան համար: Վորովհետև նա վորքի յե հանում սարուկներին հարցաբար վոր

մ ի լ ի ո ն ն ե ր, վորոնք այլ ևս չեն ուղում կրել իրենց սարկության շղթաները:

Կոմմունիստական Ինտերնացիոնալը Չան-Կայ-Շիին հայտարարեց դավաճան և թշնամի: Կոմմունիստական Ինտերնացիոնալի Կուսակցությունները պարտավոր են անելու ամեն հնարավորը, վորպեսզի դավաճանութուն գնողները, «քաղաքակիրթ» իմպերիալիստները, նույնպիսի արգահաանելի պարտութուն կրեն՝ Չինաստանում, ինչպես կրեցին նրանք Սորհուրդների Յերկրում ինտերվենցիայի (ուսումնական միջամտության) ժամանակ: Չինաստանում միջազգային հեղափոխության բախան ե վորոշվում: Միջազգային հեղափոխության մարտիկները պիտի շտապեն սղության հասնելու:

Յ Ա Ն Կ

	Էջ
1. Չինական անցքերի միջազգային նշանակութունը	3
2. Չինական հեղափոխության բնույթն ու առանձնահատկութունը	10
3. Իմպերիալիզմ, ավատականութուն և չինական հեղափոխության բնույթը	16
4. Չին հեղափոխության հեռանկարների մասին	44
5. Ազգային հեղափոխական ճակատը և դասակարգային պայքարը	56
6. Չին հեղափոխության մի քանի հիմնական տաքտիկական խնդիրները	80
7. Ազգային հեղափոխական շարժման ճգնաժամն ու բանվոր դասակարգի անելիքը	95

Հայաստանի Ազգային գրադարան



NL0429279

17994

ԳԻՆՆ Ե 40 ԿՈՊ.

